Ընտանեկան բռնության ԼԳԲՏԻՔ+ զոհերի վիճակը Հայաստանում

Ընտանեկան բռնության զոհերի վիճակը Հայաստանում

ԼԳԲՏԻՔ+

Երևան 2023

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել իրականացնել ԻԼԳԱ Եվրոպայի (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս և ինտերսեքս անձանց եվրոպական տարածաշրջանային ասոցիացիա) ֆինանսական աջակցության շնորհիվ՝ «Ընտանեկան բռնության ԼԳԲՏԻՔ+ զոհերի իրավիճակը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Հետազոտությունում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության տեսակետը և կարող են չհամընկնել ԻԼԳԱ Եվրոպայի, այլ հասարակական կազմակերպությունների և ՀՀ-ում գործող պետական մարմինների տեսակետների հետ:

Հեղինակ՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Խմբագիր՝ Լիլիթ Մարտիրոսյան

Սրբագրիչ՝ Լիլիթ Մարտիրոսյան

ILGA EUROPE

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ----- *4*
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ - - -

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

Ստորև օգտագործված հասկացությունների բացատրությունները ներկայացված են ըստ սույն վերլուծական զեկուցի մեջ ունեցած իմաստի և նշանակության:

Ամուսին	օրինական կամ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձ
Անտեսում	ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են
Ապաստարան	ընտանիքում բռնության ենթարկված անձի հոգածության կենտրոն, ուր ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում տրամադրվող անվտանգ ժամանակավոր կացարան՝ մինչև 12 ամիս ժամկետով, և որտեղ նրանք օգտվում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններից
Աջակցության կենտրոն	«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող պետական կազմակերպություն
Բիսեքսուալ կամ երկսեռական	անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ
Բռնարար կամ ընտանիքում բռնություն գործադրած անձ	ա/ ֆիզիկական անձ, ով իր ընտանիքի որևէ այլ անդամի նկատմամբ կիրառել է բռնություն,

[1] Սույն եզրույթների հիմնական աղբյուր են հանդիսացել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 31.01.2018թ-ին, «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց՝ օգնող մասնագետների համար», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2021թ. ուղեցույցը:

	բ/ ֆիզիկական անձ, որի նկատմամբ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում
Գեյ (նույնասեռական տղամարդ)	նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու նկատմամբ
Գենդեր	վերաբերում է մարդկանց առնականության և կանացիության ներքին ընկալմանը և փորձին, նաև հասարակական կառուցվածքին, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակություններից, մշակույթներից և դասակարգերից. գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ
Գենդերային ինքնություն	վերաբերում է յուրաքանչյուր անձի կողմից իր գենդերի ներքին ընկալմանը և անհատական փորձին, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին՝ ներառյալ սեփական մարմնի ընկալումը և գենդերային այլ արտահայտումները՝ հագուստը, խոսքը և պահելաձևը
Ընտանեկան բռնություն	ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության բոլոր գործողությունները, ինչպես նաև անտեսումը, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք բռնություն կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում
Ընտանիք	հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք[2]
Ընտանիքի անդամ	ա/ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ զուգընկերը, ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները, բ/ համատեղ բնակվող տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը

[2] ՀՀ սահմանադրություն, 2015թ-ի փոփոխություններով և լրացումներով:

Զոհ կամ ընտանիքում բռնության ենթարկված անձ	ա/ ֆիզիկական անձ, ով ամուսնու, զուգընկերոջ, ծնողի, ընտանիքի այլ անդամի կողմից ենթարկվել է բռնության բ/ ֆիզիկական անձ, որը, ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանիքում բռնությունից
Զուգընկեր	անձ, ում հետ զոհը գտնվում/գտնվել է անձնական սերտ (այդ թվում ինտիմ) հարաբերությունների մեջ, օրինակ՝ ամուսին, քաղաքացիական համակեցությամբ ապրող զուգընկեր, և այլն
Թիրախավորված անձ կամ խումբ	սույն հետազոտությունում օգտագործված է նկարագրելու խոցելի խմբերին, որոնք ընտանեկան բռնության են ենթարկվում իրենց սեռական կողմնորոշվածությամբ, գենդերային ինքնությամբ կամ սեռական հատկանիշներով պայմանավորված
Ինտերսեքս	մարդ, որը կենսաբանորեն ունի և՛ արական, և՛ իգական սեռերին բնորոշ կենսաբանական առանձնահատկություններ՝ ինչպես քրոմոսոմային կամ հորմոնալ, այնպես էլ սեռական օրգանների ձևով, ինչի արդյունքում չի կարողանում իրեն լիարժեքորեն նույնականացնել ո՛չ տղամարդու, ո՛չ էլ կնոջ հետ
ԼԳԲՏԻՔ+ համայնք	լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս, քվիր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով. այն իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից և հանրույթներից
Լեսբի (նույնասեռական կին)	նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ
Լիազոր մարմին	սոցիալական հարցերի ոլորտում լիազոր հանրապետական գործադիր մարմինը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է
Խոցելի անձ կամ խոցելի խումբ	անձ կամ խումբ, որոնք իրենց որևէ հատկանիշով կամ կարգավիճակով պայմանավորված տևական ժամանակ գտնվում են խոցելի վիճակում
Հաշտեցում/հաշտություն	ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցումն իրականացվում է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ընթացքում՝ Լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով: Հաշտեցումն իրականացվում է ընտանիքում բռնություն գործադրած կամ ընտանիքում բռնության ենթարկված անձի դիմումով՝ ուղղված աջակցության կենտրոնին

Հետերոսեքսուալ/ տարասեռական	անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց նկատմամբ
Հոգեբանական բռնություն[3]	ամուսնու, զուգընկերոջ կամ ընտանիքի այլ անդամի կողմից իր նկատմամբ իրականացված վարքային դրսևորումներ՝ վիրավորանք, նվաստացում, ստորացում՝ այլ մարդկանց ներկայությամբ՝ դիտավորյալ անելով այնպիսի բաներ, որոնք կվախեցնեն կամ կսարսափեցնեն նրան
Հոմոֆոբիա	վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ
Ոչ բինար	ցանկացած գենդերային ինքնություն, որը չի համապատասխանում կանացիության ու առնականության երկբևեռ համակարգին
Ռեաբիլիտացիոն ծրագիր	համալիր միջոցառումների ծրագիր, որն ուղղված է բռնություն գործադրած անձին հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրման, առողջության վերականգնման, վնասակար սովորույթներից (ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն, խաղամոլություն) ձերբազատման միջոցով նրա կողմից կրկին բռնություն գործադրելու կանխմանը
Սեռական բռնություն	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ
Սեռական կողմնորշվածություն	անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի նկատմամբ
Սեռականություն	յուրաքանչյուր անձի կենսաբանական, մտավոր, վարքագծային և սոցիալական բնութագրիչների ամբողջությունը, որը սահմանում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատ և որպես հասարակության անդամ
ՍԿԳԻ	սեռական կողմնորշվածություն և գենդերային ինքնություն և/կամ գենդերային ինքնարտահայտում
Սոցիալական աջակցության կենտրոն	«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող պետական կազմակերպություն

[3] Դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

Տնտեսական բռնություն	անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը
Տրանսգենդեր (տրանսգենդեր կին, տրանսգենդեր տղամարդ)	անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային ինքնարտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն. հովանի եզրույթ է և ներառական է տրանսգենդեր, տրանսսեքսուալ և այլ ոչ բինար գենդերային ինքնություն ունեցող անձանց համար
Տրանսսեքսուալ (փոխսեռական)	անձ, որն իրեն լիովին նույնականացնում է հաստատված սեռին հակառակ գենդերային դերի հետ և մշտապես ցանկանում է ապրել նախընտրած գենդերային դերով: Այն հաճախ ուղեկցվում է սեփական առաջնային և երկրորդային սեռային հատկանիշների ուժեղ մերժմամբ և նախընտրած գենդերին բնորոշ մարմնին համապատասխանեցման ցանկությամբ: Տրանսսեքսուալ անհատը ցանկանում է կամ իրականացնում է սոցիալական փոփոխություն (gender transition) արականից իգական կամ իգականից արական, որը բազմաթիվ, բայց ոչ բոլոր դեպքերում ներառում է նաև սոմատիկ փոփոխություն՝ հակառակ սեռի հորմոնային թերապիա և սեռական օրգանների վիրահատություն
Տրանսֆոբիա	բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա
Ֆիզիկական բռնություն[4]	ամուսնու, զուգընկերոջ կամ ընտանիքի այլ անդամի կողմից իր նկատմամբ իրականացված վարքային դրսևորումներ՝ ապտակել, որևէ առարկա նետել, որը կարող է վնասել, հրել, հարվածել, քաշել մազերը, հարվածել բռունցքով կամ որևէ այլ առարկայով, ինչը կարող է վնասել, հարվածել ոտքով, քարշ տալ կամ ծեծել, դիտավորյալ խեղդել կամ այրվածք հասցնել, սպառնալ կամ օգտագործել հրացան, դանակ կամ որևէ այլ զենք

[4] ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ աշխարհում ընտանեկան բռնության համատեքստում կարևորագույն խնդիր է ճանաչվել կանանց, երեխաների, խոցելի խմբերի նկատմամբ բռնությունը, իսկ գենդերային հիմքով խտրականությունն ու բռնությունը՝ որպես առողջության և մարդու իրավունքների համար սպառնալիք: Յուրաքանչյուր բռնություն թողնում է իր հետևանքները՝ ինքնագնահատականի անկումից, հոգեբանական ծանր ապրումներից մինչև սեփական կյանքին վերջ տալու ցանկության առաջացում:

«Ընտանեկան բռնության ԼԳԲՏԻՔ+ զոհերի իրավիճակը Հայաստանում» հետազոտության (այսուհետ նաև՝ Հետազոտություն) նպատակն է վեր հանել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում ընտանեկան բռնության դեպքերի տարածվածությունը, դրանց արտահայտման ձևերը, տեսակները, ինչը հնարավորություն կտա գնահատել ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ կիրառվող բռնության տարածվածությունն ըստ բռնության տեսակների, հաճախականությունը, կանոնավորությունը, ինչպես նաև բացահայտել բռնարարի կողմից բռնության կիրառման դրդապատճառները և շարժառիթները, բռնության ենթարկվածների ֆիզիկական և հոգեբանական հետևանքները: Հետազոտության նպատակն է նաև տեղեկատվություն ստանալ ՀՀ-ում գործող իրավապաշտպան կազմակերպությունների կողմից ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ, իրավասու մարմիններից հավաքագրել վիճակագրական տվյալներ, վերլուծել գործող օրենսդրությունը, վեր հանել առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը և հանդես գալ ոլորտին առնչվող մարմիններին ուղղված առաջարկություններով, ինչպես նաև լուծումներ գտնել ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնությունը նվազեցնելու համար:

Սույն Զեկույցում (այսուհետ նաև՝ Զեկույց) ամփոփված են հարցման հիմնական արդյունքները, մանրամասն վերլուծվել են համապատասխան ցուցիչները: Հետազոտության արդյունքներն արժեքավոր տեղեկատվություն են տրամադրում ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում ընտանեկան բռնության հիմնական ձևերի տարածվածության և հաճախականության վերաբերյալ, ներառյալ՝ ամուսնու, զուգընկերոջ կողմից գործադրվող բռնությունը, ընտանիքի անդամների՝ մասնավորապես ծնողների կողմից կատարվող բռնությունների ձևերը, և այլն:

Վերջին տարիներին Հայաստանում իրականացվել են բազմաթիվ հետազոտություններ, որոնք անդրադարձել են կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հիմնախնդրի տարբեր կողմերին, երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերին: Պետք է արձանագրենք, որ ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանակներում նման հետազոտություն չի իրականացվել, հետևաբար, սույն Զեկույցն իր տեսակով առաջինն է:

Զեկույցի առաջին մասում ներկայացվել են սեռով և գենդերով պայմանավորված ընտանեկան բռնության հիմնախնդիրները, ընտանեկան բռնությունների համատեքստում՝ Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումները, ինչպես նաև 2021թ-ից մինչև 2023թ-ի առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրությունը:

Զեկույցի հաջորդ բաժիններում ներկայացված են հետազոտության բուն արդյունքները, վիճակագրական տվյալները, ինչպես նաև իրավապաշտպան կազմակերպությունների կողմից ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի ընդհանուր պատկերը:

Ստանդարտացված հարցաթերթի և առցանց հարցաշարի միջոցով դուրս են բերվել ինչպես որակական, այնպես էլ քանակական տվյալներ: Հետազոտությունը ներառում է նաև ընտանեկան բռնությունների կարգավորման մասով ՀՀ օրենսդրության և Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների իրավական վերլուծություն:

Սույն եզրափակիչ զեկույցի հիմնական նպատակներն են հարցման տվյալները և վերլուծության արդյունքները ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, ՀՀ ներքին գործերի նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ ոստիկանություն և քննչական կոմիտեին, միջազգային կազմակերպություններին, ոչ կառավարական կազմակերպություններին, ԼԳԲՏԻՔ+ համայնքին, նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին՝ բարձրացնելու նրանց իրազեկվածությունը ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնությունների տարածվածության վերաբերյալ և դրանով իսկ բարելավել օրենսդրական դաշտը՝ ապահովելու երաշխիքներ ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում կատարվող ընտանեկան բռնության դեպքերի բացահայտման, նրանց անվտանգության ապահովման, օրենքով նախատեսված պաշտպանական միջոցների տրամադրման, սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով ընտանեկան բռնությունների վերաբերյալ վիճագրություն վարելու մեխանիզմների ստեղծման համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության կողմից հետազոտությունն իրականացվել է 2023թ-ի փետրվար ամսից մինչև սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են 2021թ-ից մինչև 2023թ-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ իրականացված ընտանեկան բռնության դեպքերը:

Հետազոտությունը հնարավորություն է տվել ընդհանուր պատկեր կազմել ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության տեսակների, դրանց հաճախականության և կանոնավորության վերաբերյալ, ինչպես նաև բացահայտել դրա շարժառիթները, դրդապատճառները, զոհի ֆիզիկական, զգացմունքային և հոգեբանական հետևանքները:

Իրավիճակի սույն վերլուծությունը կատարվել է օրենքների, տարբեր կառույցների կողմից իրականացված հետազոտությունների, զեկույցների ուսումնասիրության, ինչպես նաև ԼԳԲՏԻՔ+ անձանց հետ դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով: Հարցազրույցները, փաստաթղթերի հետազոտությունը և վերլուծությունն օգնել են հետազոտողին ներկայացնել համապարփակ պատկեր տիրող իրավիճակի վերաբերյալ:

Հետազոտությունն իրականացվել է հետազոտության իրականացման ժամանակ 16 տարին լրացած ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր ԼԳԲՏԻՔ+ անձինք են ցանկացել իրենց կամ այլոց հետ կատարված դեպքերի մասին խոսել անհատական հարցազրույցների միջոցով՝ ստեղծվել է նաև առցանց անանուն հարցաշար, և տրվել է հարցազրույցին հեռախոսով մասնակցելու հնարավորություն: Առցանց հարցաթերթը թույլ է տվել ԼԳԲՏԻՔ+ անձանց Երևանի և ՀՀ մարզերի ցանկացած վայրից և ցանկացած ժամի անանուն հաղորդելու ընտանեկան բռնության դեպքերի մասին:

Հարցաթերթիկների և դեմ առ դեմ հարցումների անանունությունն առաջին հերթին ապահովել է հարցման մասնակիցների անվտանգությունը, չբացահայտված լինելու հանգամանքը, քանի որ անանուն հարցման ժամանակ պատասխանները չեն պահանջում տրամադրել որևէ անձնական տեղեկատվություն, որը կարող է պոտենցիալ նույնականացնել նրանց, ուստի այն երաշխավորել է պատասխանների գաղտնիությունը, նրանց հնարավորություն է ընձեռնվել ազատ, անկաշկանդ, անկեղծ լինել հարցազրույցների ժամանակ: Գաղտնիությունն օգնել է նաև մասնակիցների և հարցման հավաքագրողի միջև վստահության ձևավորմանը՝ հանգեցնելով ավելի ճշգրիտ և հուսալի տվյալների ձեռքբերման:

Հաշվի առնելով թեմայի զգայունությունը և մասնակիցների ինքնությունը չբացահայտելու ցանկությունը, իրականացված հարցումներից և տվյալները մշակելուց հետո բոլոր հարցաթերթիկները ոչնչացվել են:

Այս հետազոտության շրջանակներում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը համագործակցել է տրանսգենդեր համայնքի ներկայացուցչի հետ: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն ապահովել է համայնքի իրազեկումը և մասնակցությունը հետազոտությանը, հանդիսացել է կազմակերպության և ԼԳԲՏԻՔ+ համայնքի միջև կապող օղակ:

Կազմակերպությունը նաև հետազոտության մասին տեղեկացրել է ԼԳԲՏԻՔ+ անձանց խնդիրներով զբաղվող կազմակերպություններին, նրանց անդամներին, կամավորներին և շահառուներին: Հետազոտության մասին տեղեկատվություն է տեղադրվել նաև տարբեր սոցիալական մեդիա-հարթակներում:

Հետազոտության մեջ ընդգրկվել են 300 կատարված հարցազրույցներից ԼԳԲՏԻՔ+ անձանց կողմից ներկայացված 61 դեպքերը, որոնք տեղի են ունեցել 2021 թվականի հունվարից մինչև 2023 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում:

Թեև Հետազոտությամբ նախատեսվում էր իրականացնել նաև առցանց 2500 հարցումներ, սակայն, հաշվի առնելով ԼԳԲՏԻՔ+ անձանց վախը՝ հասարակության կողմից չընկալվելու, բացահայտված լինելու հանգամանքը, բռնարարի կողմից հնարավոր հաշվեհարդարը, բռնարարի հետ նույն ընտանիքում ապրելու հանգամանքը, ինչպես նաև ընտանեկան բռնությունների լատենտայնությունը, առցանց հարցումների պատասխաններն այդպես էլ չեն ստացվել՝ վերոնշյալ և մի շարք այլ խոչընդոտող գործոնների պատճառով: Նշված գործոններից էին նաև՝ անկախ անանունության հանգամանքից, հարցերին բացահայտ և անկաշկանդ պատասխանելուց խուսափելը, հարցվողների անչափահաս լինելու հանգամանքը, և այլն:

Անկասկած, առցանց հարցումների բացակայությունն ազդել է հետազոտվող անձանց ընդհանուր ընդգրկվածության վրա, սակայն, այն չի ազդել հետազոտության ընդհանուր պատկերը ստանալու վրա, քանի որ դեմ առ դեմ իրականացված հարցումները թույլ են տվել պատկերացում կազմել ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏԻՔ+ անձանց հիմնախնդիրների, բռնությանը նպաստող գործոնների, ինչպես նաև օրենքների բացերի և թերությունների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով թեմայի շուրջ զրուցել չցանկացող որոշ ԼԳԲՏԻՔ+ անձանց առկայությունը, ընդհանուր պատկերի մասին օբյեկտիվ պատկերացում կազմելու համար դեմ առ դեմ հարցումներն իրականացվել են ավելի շատ, քան նախատեսված էր ի սկզբանե:

Որպես հիմնական խնդիր, որին բախվել ենք հետազոտության իրականացման ժամանակ, պետք է առանձնացնենք ԼԳԲՏԻՔ+ անձանց կողմից բացահայտվելու վախը, ինչը հաղթահարվել է հետազոտության մասնակիցների տվյալները և հարցաթերթիկները ոչնչացնելու միջոցով՝ հարցումներն ավարտելուց և տվյալները հավաքագրելուց անմիջապես հետո:

Զեկույցը հիմնվում է հետազոտությունն անցկացնող աշխատանքային թիմի հետ անցկացված քննարկումների, իրենց կողմից իրականացված իրավական վերլուծության և հետազոտական աշխատանքների ամփոփ արդյունքների վրա: Հետազոտության շրջանակներում ամփոփվել և վերլուծվել են ընտանեկան բռնության դեպքերը, որոնք հնարավորություն են տվել ընդհանուր պատկեր կազմել ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ բռնության դրսևորման ձևերի, տարածվածության, հաճախակիության վերաբերյալ:

ՄԱՍ I. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1.1 Գենդերը և ընտանեկան բռնությունները

Ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների և առողջության դեմ ուղղված սպառնալիք է: Ընտանեկան բռնության առավել խոցելի խմբեր են հանդիսանում կանայք և երեխաները, իսկ ամենահաճախ հանդիպող բռնությունները անձի սեռով և գենդերով պայմանավորված դեպքերն են: Կանանց նկատմամբ բռնությունը մարդու համընդհանուր իրավունքների խախտում է, որի հիմնապատճառները տղամարդկանց և կանանց միջև անհավասարությունն է, կանանց նկատմամբ խտրականության դրսևորումները:

Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը շարունակում են մնալ ամբողջ աշխարհում մարդու իրավունքների ամենատարածված խախտումներից մեկը: Այն ազդում է բոլոր խավերի կանանց վրա՝ անկախ մշակութային, կրոնական, տնտեսական, սոցիալական կամ աշխարհագրական ծագումից: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից տրված գնահատականները ցույց են տալիս, որ աշխարհում յուրաքանչյուր երրորդ կին իր կյանքի ընթացքում բռնության է ենթարկվում[5]:

Գենդերային հիմքով բռնությունն ուղղված է անձի դեմ՝ ելնելով նրա սեռից և գենդերից, ուստի այս հիմքով բռնության ենթարկվում են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ, սակայն տուժողների ճնշող մեծամասնությունը կանայք և աղջիկներ են, իսկ բռնարարը հիմնականում տղամարդն է: *«Գենդերային հիմքով (սեռով պայմանավորված) բռնություն կանանց[6] նկատմամբ» նշանակում է այն բռնությունը, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափ[7]:*

«Գենդերային հիմքով կանանց սպանություններ», «կնասպանություն» եզրույթները հաճախ օգտագործվում են միաժամանակ ՄԱԿ-ի փաստաթղթերում՝ ընդգծելու բռնության բնույթը: «Ֆեմիցիդ» կամ «կնասպանություն» եզրույթն առաջին անգամ 1976 թվականին կիրառեց Դայանա Ռասելը՝ սահմանելով այն հետևյալ կերպ՝ «արական սեռի կողմից իգական սեռի սպանություն՝ վերջիններիս լոկ այդ սեռին պատկանելու պատճառով»[8]: Ֆեմիցիդը «կանանց և աղջիկների սպանությունն է նրանց սեռի պատճառով, որ, ի թիվս այլոց, կարող է լինել՝ … նաև նրանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության պատճառով»: Որոշ հետազոտողներ կարծում են, որ ֆեմիցիդ են համարվում այն դեպքերը, երբ զոհերը ԼԳԲՏԻՔ+ համայնքին պատկանող կանայք են: Այս դեպքերում տեսությունն ասում է, որ սպանությունները տեղի են ունենում գենդերային դրդապատճառների և հոմոֆոբիայի կամ տրանսֆոբիայի համակցման պատճառով՝ կախված դեպքից: Մասնավորապես, չեն բացառվում, և մեծ է հավանականությունը, որ իրենց կին նույնականացնող անձինք ենթարկվեն հարձակման և սպանվեն իրենց գենդերային ինքնության և գենդերային ինքնարտահայտման պատճառով: Որոշ հասարակարգերում՝ կախված իրենց մշակույթից, անգամ այդ հանցագործությունները կատարվում են որպես «պատիժ»՝ զոհի համար հետերոսեքսուալության սոցիալական նորմը խախտելու համար[9]:

---

[5] Մանրամասն տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպության կայքում՝ հետևյալ https://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women հղումով:

[6] «Կանայք»՝ ներառում է նաև[18] տարին չլրացած աղջիկներին:

[7] Տե՛ս «Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի 2011 թ-ին Ստամբուլում ստորագրված կոնվենցիա, (Ստամբուլյան կոնվենցիան), հոդված 3:

[8] Կնասպանության մասին մանրամասն տե՛ս «Կնասպանությունը Հայաստանում: Լուռ համաձարակ», Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, Զեկույց, 2016, Femicide_Report_ARM.pdf (coalitionagainstviolence.org) հղումով:

[9] Ֆեմիցիդի մասին մանրամասն տե՛ս https://hy.warbletoncouncil.org/feminicidio-6089 հղումով:

Գենդերային հիմքով բռնությունից ցանկացած անհատի պաշտպանության պարտավորությունը բխում է մարդու իրավունքների հետևյալ պայմանագրերից՝ *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ, 1953 թ.)*[10], *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՔՔԻՄԴ, 1976թ.)*[11], *Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր (ՏՍՄԻՄԴ, 1976թ.)*[12], *Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (ԿԽՎԿ, 1981թ.)*[13], *Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա (ՄԱԿ-ի ԽԴԿ, 1987թ.)*[14]*:*

Եվրոպական երկրների համար տղամարդկանց և կանանց հավասարությունը ոչ միայն մարդու իրավունքների սկզբունք է, այլև ժողովրդավարության պարտադիր պայման, սոցիալական արդարության հրամայական: Եվրոպայի խորհրդի բազմաթիվ փաստաթղթեր սահմանում են, որ գենդերային հավասարությունը ենթադրում է կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածություն, լիազորություններ, պատասխանատվություն և մասնակցություն հասարակական և անձնական կյանքի բոլոր ոլորտներում և պահանջում ջանքերի մեկտեղում սեռային խտրականության, օտարման և գենդերային կարծրատիպերի դեմ պայքարում:

Բազմաթիվ միջազգային փաստաթղթեր և կոնվենցիաներ պարտավորություն են սահմանում պետության համար միջոցներ ձեռնարկելու ընտանեկան բռնությունը կանխելու, տուժողներին պաշտպանելու, օգնություն և աջակցություն ցուցաբերելու, անվտանգությունն ապահովելու, բռնարարներին արդյունավետ քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Ընտանեկան բռնությունների դեմ պայքարի և դրանց կանխարգելմանն ուղղված կարևորագույն փաստաթղթերից է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի 2011թ-ին Ստամբուլում ստորագրված կոնվենցիան (այսուհետ՝ Ստամբուլյան կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2014 թվականին՝ դրա ընդունումից ընդամենը երեք տարի անց):

Հայաստանը Ստամբուլյան կոնվենցիան ստորագրել է 2018 թ. հունվարի 18-ին, իսկ վավերացման գործընթացը[15] դեռ հետաձգվում է[16]: Այս Կոնվենցիայի վավերացմամբ՝ Հայաստանում կպաշտպանվեն նաև ԼԳԲՏԻՔ+ անձինք՝ սեռական կողմնորոշվածությամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված ընտանեկան բռնության դեպքերից, քանի որ Ստամբուլյան կոնվենցիան պայքարում է ընտանեկան բռնության դեմ՝ անկախ ընտանիքից կամ ընտանեկան այն միջավայրից, որտեղ այն տեղի է ունենում: Ընտանեկան բռնությունը կարող է լինել զուգընկերոջ կողմից ներկա կամ նախկին ամուսինների և համատեղ բնակվող զուգընկերների միջև, ինչպես նաև միջսերնդային բռնություն ընտանիքի տարբեր սերունդների երկու կամ ավելի ներկայացուցիչների միջև: Քանի որ նպատակը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարն է, որտեղ էլ այն տեղի ունենա, Ստամբուլյան կոնվենցիայի կիրառումը չի սահմանափակվում օրինական ամուսիններով, այլ տարածվում է բոլոր զուգընկերների նկատմամբ՝ ամուսնացած կամ չամուսնացած՝ անկախ նրանց նույն կամ տարբեր սեռերի պատկանելությունից: Տուժողների ոչ մի խումբ դուրս չի մնում պաշտպանությունից ամուսնական կարգավիճակի կամ Կոնվենցիայում ներառված՝ խտրականության որևէ այլ հիմքով:

---

[10] Ֆեմիցիդի մասին մասնրամասն տե՛ս https://hy.warbletoncouncil.org/feminicidio-6089 հղումով:
[11] Հայաստանը այն վավերացրել է 2002 թվականին:
[12] Հայաստանը այն վավերացրել է 1993 թվականին:
[13] Հայաստանը այն վավերացրել է 1993 թվականին:
[14] Հայաստանը այն վավերացրել է 1993 թվականին:
[15] Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման դեմ ստորագրահավաքներ էին իրականացվում Երևանում և մարզերում, հղումը՝ https://armeniasputnik.am/20190814/Stambulyan-konvenciayi-dem-storagrahavaqy-Gyumri-e-hasel-el-inch-en-anelu-naxadzernoghnery-20065850.htm
[16] Ինչպես տեղեկացանք ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովից, 25.08.2023թ-ի դրությամբ որևէ հստակ տեղեկատվություն չկա Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման ժամանակահատվածի վերաբերյալ:

2011 թվականի ապրիլին կոնվենցիայի ընդունումից ի վեր այն զգալի դրական ազդեցություն է ունեցել ողջ Եվրոպայում: Այն օգնել է հասարակության ուշադրությունը հրավիրել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հրատապ անհրաժեշտության վրա[17]:

Սակայն փաստենք, որ Ստամբուլյան կոնվենցիան ճանաչում է, որ տղամարդիկ և տղաները նույնպես կարող են դառնալ ընտանեկան բռնության զոհ: Տղամարդիկ ենթարկվում են կոնվենցիայում ներառված բռնության մի շարք ձևերի, թեև այդ բռնությունը լինում է ավելի հազվադեպ և հաճախ ավելի թեթև ձևով: Ստամբուլյան կոնվենցիան ճանաչում է դա՝ խրախուսելով մասնակից պետություններին կիրառել իր դրույթներն ընտանեկան բռնության բոլոր զոհերի, այդ թվում՝ տղամարդկանց, երեխաների և տարեցների նկատմամբ[18]:

Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը չեն կարող բացահայտվել և համապատասխան արձագանքի արժանանալ՝ առանց պետության միջամտության և պետական կամքի: Գենդերային հիմքով և ընտանեկան բռնության հիմնական պատճառների ու դրսևորումների վերացումը պահանջում է տարբեր սուբյեկտների՝ ոստիկանության, դատական համակարգի, սոցիալական ծառայությունների, երեխաների պաշտպանության հաստատությունների, առողջապահության մասնագետների, կանանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և համապատասխան այլ գործընկերների փոխհամաձայնեցված և համալիր ջանքեր: Մասնավորապես, Ստամբուլյան կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ *«Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարված այն արարքները կանխելու, քննելու, պատժելու և հատուցելու ուղղությամբ, որոնք մտնում են սույն Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ»:*

Ստամբուլյան կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է առանց խտրականության մասին դրույթը, ապահովում է (ընտանեկան) բռնության բոլոր զոհերի հավասար պաշտպանությունը՝ անկախ նրանց հատկանիշներից: Այն է. *«Մասնակից պետությունների կողմից սույն Կոնվենցիայի դրույթների կատարումը, մասնավորապես՝ զոհերի իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցները, պետք է ապահովվեն առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից,* **սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից (ընդգծումը մերն է),** *տարիքից, առողջական վիճակից, հաշմանդամության առկայությունից, ամուսնական դրությունից, միգրանտի կամ փախստականի կամ այլ կարգավիճակից»:*

«Առանց խտրականության» սկզբունքը երաշխավորում է, որ «բոլոր մարդիկ ունեն բոլոր ազատությունները և իրավունքները՝ …առանց որևէ տարբերակման»: Այս սկզբունքը գոյություն ունի մարդու իրավունքների բոլոր հիմնական կոնվենցիաներում, ինչպես ՔՔԻՄԴ[19] 2-րդ հոդվածի 1-ին կետը և 26-րդ հոդվածը, ՏՍՄԻՄԴ 2-րդ հոդվածի 2-րդ կետը և ՄԻԵԿ 14-րդ հոդվածը: Ստամբուլյան կոնվենցիան տրամադրում է խտրականությունից պաշտպանություն՝ հիմնվելով չափանիշների բաց ցանկի վրա, ներառյալ՝ գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշվածությունը: Կիրառելով Ստամբուլյան կոնվենցիայի դրույթները առանց գենդերային ինքնության և սեռական կողմնորոշվածության հիմքով որևէ խտրականության՝ Կոնվենցիայով ճանաչվում է, որ յուրաքանչյուր ոք կարող է լինել ընտանեկան բռնության զոհ: Բացի այդ, Ստամբուլյան կոնվենցիան ապահովում է, որ յուրաքանչյուր մարդ, անկախ իր սեռական կողմնորոշվածությունից կամ գենդերային ինքնությունից, պաշտպանված է ընտանեկան բռնությունից և նրա համար հասանելի են համապատասխան աջակցություն և պաշտպանություն[20]:

---

[17] Մանրամասն տե՛ս «Ստամբուլյան կոնվենցիան՝ գենդերային բռնությանը վերջ դնելու հզոր գործիք, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ ուղեցույց խորհրդարանականների համար, Եվրոպայի խորհուրդ, 2019թ. նոյեմբեր, հղումը՝ ARM(2021)IC_Handbook_ARM_08112021 2754-9080-4997 v.1.pdf:

[18] Տե՛ս Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույց, կետեր 41, 45:

[19] Հայաստանն այն վավերացրել է 1993 թվականին:

[20] Այս մասին մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության կարծիքը՝ Եվրոպայի Խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» (Ստամբուլյան կոնվենցիա) վավերացման սահմանադրական վավերացման հետևանքների մասին, Վենետիկի հանձնաժողով, Ստրասբուրգ, 2019թ. հոկտեմբերի 14, Կարծիք թիվ 961/ 019, CDL-AD(2019)018:

Ըստ Վենետիկի Հանձնաժողովի կարծիքի, մեջբերում ենք. «Ստամբուլյան կոնվենցիան չի սահմանում նոր չափանիշներ՝ վերոնշյալ երկու հիմքերը՝ գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը, արգելված տարբերակումների ցանկում ներառելով: Ավելի շուտ այն «հիմնվում է իրավական պարտավորությունների վրա, որոնք բխում են այլ իրավական փաստաթղթերից», ինչպես ՄԻԵԿ-ը և դրա համապատասխան նախադեպային իրավունքը, ԿԽՎԿ-ն, ՔՔԻՄԴ-ը, ՏՍՄԻՄԴ-ը և ՄԱԿ-ի ԽԴԿ-ն[21]: Մարդու իրավունքների պաշտպանության այլ մարմիններ ևս բարձրացրել են սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հետ կապված խտրականության հարցը: ԿԽՎԿ կոմիտեն, օրինակ, երկու ընդհանուր առաջարկություն է հրապարակել, որոնցով ճանաչում է, որ կանանց նկատմամբ խտրականությունը «անքակտելիորեն կապված է» այլ գործոնների հետ, որոնք ազդում են կնոջ վրա, ինչպես սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը: Մարդու իրավունքների կոմիտեն իր հերթին գտել է, որ ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետում և 26-րդ հոդվածում սեռի հիշատակումը նաև ներառում է սեռական կողմնորոշվածությունը[22]: Մարդու իրավունքների կոմիտեն, իր ընդդատության սահմաններում, համարում է, որ մասնակից պետությունները պարտավորվում են հարգել իրենց տարածքներում բոլոր անձանց, ՔՔԻՄԴ-ով սահմանված, իրավունքները, ինչպես նաև օրենքի հավասար պաշտպանության իրավունքը՝ առանց տարբերակման, ներառյալ՝ սեռական կողմնորոշվածության հիմքով խտրականության (ՔՔԻՄԴ հոդվածներ 2(1) և 26)[23]: ՏՍՄԻԿ-ն ընդունել է Ընդհանուր կարծիք տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում խտրականության բացառման մասին, որում այն ճանաչում է, որ մարդու կողմից ՏՍՄԻՄԴ-ի իրավունքների իրականացումը չպետք է սահմանափակվի նրա սեռական կողմնորոշվածության կամ գենդերային ինքնության հիման վրա: ՏՍՄԻԿ-ը բացահայտ կերպով ճանաչում է, որ ՏՍՄԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «այլ կարգավիճակ» չափանիշը ներառում է սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը: Հետևաբար, անձի սեռական կողմնորոշվածությունը կամ գենդերային ինքնությունը դասվում են խտրականության արգելման հիմքերի շարքին, որոնք սահմանված են ՏՍՄԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 2-րդ կետում[24]: Ի վերջո, ՄԱԿ-ի ԽԴԿ-ով ստանձնած պարտավորությունների կատարման հետ կապված՝ ստորագրող պետությունները պետք է ապահովեն ՄԱԿ ԽԴԿ-ի կիրառումը բոլոր մարդկանց նկատմամբ՝ անկախ նրանց սեռական կողմնորոշվածությունից կամ տրանսգենդերային ինքնությունից[25]»[26]:

Հայաստանում գենդերային քաղաքականության պատմության սկիզբը դրվել է 1990–ականներին: Քաղաքականության մշակման վրա իրենց անմիջական ազդեցությունն են ունեցել Վիեննայում կայացած մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված կոնֆերանսը (1993), Կահիրեյում կայացած բնակչությանն ու զարգացմանը նվիրված կոնֆերանսը (ICPD, 1994) և կանանց նվիրված համաշխարհային կոնֆերանսը (Պեկին, 1995), որոնք միտված էին բարձրացնելու գենդերային հավասարության հիմնահարցերն աշխարհում և դրան հասնելու համապատասխան քաղաքականության մշակումը:

---

[21] Օրինակ՝ ՄԻԵԴ-ը ՄԻԵԿ-ի իր մեկնաբանություններում թույլ է տալիս իրենց սեռական կողմնորոշվածության և (կամ) գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկված դիմումատուներին պնդել, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածի խախտում՝ ՄԻԵԿ-ի մեկ այլ էական իրավունքի խախտման հետ համակցված:

[22] Տե՛ս ՄԻԿ, Թունեն ընդդեմ Ավստրալիայի, գանգատ թիվ 488/1992, 1994 թ. մարտի 31, կետ 8.7:

[23] Տե՛ս ՄԻԿ, X-ն ընդդեմ Կոլումբիայի, գանգատ թիվ 1361/2005, 2001 թ. հունվարի 13, կետ 7.2, ՄԻԿ, Ցանգն ընդդեմ Ավստրալիայի, գանգատ թիվ 941/2000, 1999 թ. հունիսի , կետ 10.2:

[24] Տե՛ս ՏՍՄԻԿ, թիվ 20 ընդհանուր կարծիք, հոդված 2 (2) (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում առանց խտրականության մասին), 2009 թ. հուլիսի 2, կետ 32:

[25] Տե՛ս ԽԴԿ, թիվ 2 ընդհանուր կարծիք, Պայմանավորվող պետությունների կողմից 2-րդ հոդվածի իրականացում, 2008 թ. հունվարի 24, կետ 21:

[26] Այս մասին մանրամասն վերլուծությունը մեջբերված է՝ «Հայաստանի Հանրապետության կարծիքը՝ Եվրոպայի Խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» (Ստամբուլյան կոնվենցիա) վավերացման սահմանադրական վավերացման հետևանքների մասին, Վենետիկի հանձնաժողով, Ստրասբուրգ, 2019թ. հոկտեմբերի 14, Կարծիք թիվ 961/ 019, CDL-AD(2019)018:

Կանանց և տղամարդկանց հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով[27], Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերով: Սեռերի հավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ սահմանադրության 29-րդ հոդվածում[28], կանանց և տղամարդկանց հավասարությունը՝ 30-րդ հոդվածում[29], իսկ սեռով պայմանավորված խտրականության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածը[30] նախատեսում է քրեական պատասխանատվություն:

Հայաստանը վավերացրել է կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային պայմանագրեր՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (CEDAW), 1993թ., «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (CEDAW Optional Protocol) 2006թ., «Կանանց քաղաքական իրավունքների մասին» կոնվենցիա 2007թ., «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա»-ն լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրություն 2002թ., և մի շարք այլ միջազգային պայմանագրեր:

Չնայած առկա իրավական մեխանիզմների գոյությանը, Հայաստանում, վերջին տարիներին շարունակում ենք պարբերաբար լսել ընտանեկան բռնության աճող թվերի մասին: Տագնապեցնող են նաև այն հաղորդումները, ըստ որոնց ընտանեկան բռնության մի շարք դեպքեր ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում հանգեցրել են ընդհուպ մինչև ինքնասպանության և մահվան: Նման դեպքերը սոցիալական մեդիայով ուղեկցվում են ատելության կոչերով, բռնությունը արդարեցնելով, ծաղրանքով և ԼԳԲՏԻՔ+ անձանց սպանելու կոչերով:

Ավանդական հասարակակական բարքերը, անհանդուրժողականությունը տարբերվող անձանց ու խմբերի նկատմամբ, կրթական մակարդակի անբավարար լինելը և այլ գործոններ շարունակում են գերիշխող լինել մեր հասարակությունում, որը խրախուսում է այդ թվում նաև ընտանեկան բռնությունը կամ այլ տիպի ոտնձգությունը ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ: Այն իսկապես մարտահրավեր է, որի վերացման ուղղությամբ հարկավոր են համընդհանուր ջանքեր, գործուն օրենսդրական մեխանիզմներ, կրթական մակարդակի շարունակական բարձրացում, որոնք կձևավորեն հանդուրժող, ընդունող հասարակություն, որը կբերի բռնության դատապարտմանը:

[27] Սույն օրենքն ընդունվել է 2013թ-ի մայիսի 20-ին, ուժի մեջ է մտել՝ 2013թ-ի հունիսի 29-ից:
[28] ՀՀ սահմանադրության հոդված 29-ը սահմանում է. «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:
[29] ՀՀ սահմանադրության հոդված 30-ը սահմանում է. «Կանայք և տղամարդիկ իրավահավասար են»:
[30] ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն. «1. Խտրականությունը՝ տարբերակված վերաբերմունքի դրսևորումը, որը ոտնահարում է անձի իրավունքները կամ ազատությունները, կամ որով անձին առավելություններ են տրվում՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, առողջական վիճակի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով»:

1.2 Ընտանեկան բռնության իրավակարգավորումները Հայաստանում

Ընտանեկան բռնության հասկացությունը և տեսակները ներկայացված են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում (այսուհետ սույն տեքստում նաև՝ Օրենք)[31]:

Օրենքը կարևոր նշանակություն ունի ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելման և գործնական իրատեսական քայլերի ձեռնարկման համար իրավական դաշտի կարգավորման, ընտանեկան բռնության դեպքերի բացահայտման, վերհանման, ինչպես նաև դրանց դեմ պայքարի մեխանիզմների ներդրման տեսանկյունից:

Մասնավորապես, Օրենքը կանոնակարգում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպաիրավական հիմքերը, սահմանում է ընտանիքում բռնության հասկացությունը, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները: Օրենքի ընդունումից հետո ընդունվել են նաև մի շարք ենթաօրենսդրական ակտեր[32], որոնք կարգավորում են ընտանիքում բռնության դեպքերի հաշվառումը լիազոր մարմիններում, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը, ռեաբիլիտացիան, նրանց ֆինանսական աջակցության տրամադրումը, և այլն:

Սակայն, պետք է նաև արձանագրենք, որ թեև ՀՀ-ում ընդունվել է ընտանեկան բռնության մասին Օրենքը, սակայն այն ամբողջապես չի պաշտպանում խոցելի խմբերին ընտանեկան բռնությունից, օրենսդրական դաշտում առկա են մի շարք բացթողումներ, թերի կարգավորումներ, որոնց պարագայում չունենք բռնարարներին պատժելու արդյունավետ և բավարար մեխանիզմներ:

Օրենքը ճանաչում է ֆիզիկական, սեռական, տնտեսական, հոգեբանական բռնությունը և անտեսումը[33], բայց գործող ՀՀ քրեական օրենսգրքով միայն ֆիզիկական և սեռական բռնություններն են քրեորեն պատժելի:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝

1) նախազգուշացումը.
2) անհետաձգելի միջամտության որոշումը.
3) պաշտպանական որոշումը»:

Նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն:

Եթե ընտանեկան բռնության դեպքով առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է **անհետաձգելի միջամտության որոշում:**

---

[31] Սույն օրենքն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 31-ին:
[32] ՀՀ կառավարության 10.10.2019 թվականի N 1381-Ն որոշումը՝ «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին»:
[33] Ընտանեկան բռնությունների տեսակների մեկնաբանությունները տրված են սույն Զեկույցի «Հիմնական հասկացությունները և դրանց բացատրությունները» բաժնում:

Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ: Ընդ որում, անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը[34]:

Պաշտպանական որոշումը կայացվում է ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ գտնվող անձանց պաշտպանելու և ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով: Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը, անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և խնամակալության ու հոգաբարձության մարմինը: Պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով: Անհետաձգելի միջամտության որոշման ուժի մեջ լինելը չի բացառում պաշտպանական որոշման համար դիմելու հնարավորությունը:

Օրենքը, նման պաշտպանական միջոցներ նախատեսելով, նպատակ է հետապնդել, արարքը քրեական հանցագործություն չորակելու պարագայում, բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառել որոշակի զսպիչ մեխանիզմներ, որոնք հետագայում կկանխեն անձի կողմից բռնության կրկնակիության դեպքերը: Այն անձինք (բռնություն գործադրած անձինք), որոնց նկատմամբ կայացվել են պաշտպանական որոշումներ, ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման և հաշվառումից հանվում է այն ժամանակ, եթե ընտանիքում բռնության վերջին արարքից հետո մեկ տարվա ընթացքում այդ անձի նկատմամբ չի կայացվել նոր անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կամ համապատասխան հանցագործության համար մեղադրական դատավճիռ:

Արձանագրենք նաև, որ պաշտպանական միջոցները ոչ բոլոր դեպքերում են կանխարգելում հետագայում ընտանեկան բռնությունների կրկնակիության դեպքերը, հաճախ չունեն արդյունավետություն, այլև հնարավոր է ավելի ագրեսիվ դարձնեն բռնարարներին:

Մասնավորապես, պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման պահանջները չկատարելու համար, որի սանկցիայով առավելագույն պատիժ է սահմանված ազատազրկում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: Պատժի նման չափի պայմաններում բռնություն գործադրած անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու դեպքում չի կիրառվում կալանքը որպես խափանման միջոց, ուստի բռնարարը կարող է շարունակել բռնություն գործադրել զոհի նկատմամբ:

Հետևաբար, գտնում ենք, որ անհրաժեշտ է խստացնել նշված հոդվածով սահմանված սանկցիան՝ կանխարգելելու հետագա բռնությունները և խուսափելու անդառնալի դեպքերից:

Պետք է արձանագրել նաև, որ քրեական դատավարության գործիքների կիրառումը ևս կարող է լինել ոչ արդյունավետ՝ համապատասխան մեխանիզմների, ինչպես նաև օրենքի բացի պատճառով: Մասնավորապես, հարուցված քրեական վարույթի դեպքում քննիչն իրավասու է հատուկ պաշտպանության միջոցներ կիրառել՝ պաշտպանելու բռնության ենթարկված զոհին բռնարարից:

[34] Մանրամասն տե՛ս Օրենքի հոդված 7:

Ի թիվս այլոց, այդպիսի միջոցներից է «պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը» (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածներ), որի կայացման դեպքում, պաշտպանվող անձի կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի մասին վկայող փաստերի առկայության դեպքում, երբ դրանք բավարար չեն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար, վարույթն իրականացնող մարմինը նրան պաշտոնապես նախազգուշացնում է պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու անթույլատրելիության, ինչպես նաև այդ պահանջը խախտելու համար օրենքով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին: Այնինչ, բռնարարը, խախտելով պաշտպանվող անձի հետ շփվելու արգելքը, չի ենթարկվում պատասխանատվության՝ ՀՀ քրեական օրենսգրքով այդպիսի արարք նախատեսված չլինելու պատճառով, քանի որ ինչպես տեսնում ենք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածը պարունակում է բլանկետային նորմ, այսինքն, պատասխանատվության վրա հասնելը կապում է մեկ այլ օրենքով նախատեսված կարգավորման հետ, որը բացակայում է:

Հաջորդ խնդրահարույց դրվագը վերաբերում է ոստիկանության ծառայողի կողմից կիրառված նախազգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը բռնարարի կողմից ՀՀ վարչական դատարանում բողոքարկելուն: Հաճախ, ոստիկանության ծառայողը նշված միջոցները կիրառում է լսելով միայն զոհին, քանի որ բռնություն գործադրած անձը կարող է չներկայանալ ոստիկանություն և բացատրություն չտալ տեղի ունեցած դեպքի մասին և այնուհետև բողոքարկել ոստիկանության ծառայողի կողմից կայացրած որոշումը: ՀՀ վարչական դատարանը նման դեպքում շատ հաճախ բավարարում է բռնարարի հայցը և անվավեր է ճանաչում ոստիկանության կողմից կայացված նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության որոշումը՝ բռնարարի լսված լինելու իրավունքը պահպանված չլինելու, ինչպես նաև կայացրած որոշումը միայն բռնության զոհի բացատրություններով կայացնելու պատճառաբանությամբ, ինչն էլ իր հերթին բերում է բռնարարի անպատժելիության զգացողության և հետագա բռնությունների[35]:

Օրենքով նաև նախատեսված է ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման մեխանիզմ, որն իրականացվում է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ընթացքում՝ օրենքով սահմանված կարգով: Չեն բացառվում այնպիսի դեպքեր, երբ բռնարարը ճնշում գործադրի զոհի վրա, որպեսզի նա հաշտվի վերջինիս հետ: Նման դեպքերը բացառելու համար իրավապահ մարմինները պետք է խորքային ուսումնասիրեն յուրաքանչյուր դեպքի դրդապատճառներն ու շարժառիթները, միջադեպի ծանրությունը, շարունակականությունը, քանի որ ընտանեկան բռնությունը հիմնականում տեղի է ունենում երկար տարիներ, զոհը տևական ժամանակ ապրում է բռնության միջավայրում՝ նախքան դիմում է իրավապահ մարմիններին: Պարզ է, որ ընտանեկան բռնության ընթացքը տարբերվում է բռնության այլ տեսակներից, քանի որ բռնարարին զոհը, հիմնականում, սիրում է կամ վստահում է, բռնարարը զոհի ծնողն է, հարազատն է, զուգընկերն է: Այսպիսի հանգամանքները զոհի մոտ առաջացնում են կախվածություն, որը խոչընդոտում է բռնության ենթարկված անձին հեռանալ, կամ ֆինանասական դրությունից ելնելով՝ անձը հնարավորություն չի ունենում ընտանիքից հեռանալու և ինքնուրույն տնտեսություն վարելու: Ընտանեկան բռնությունը անմիջապես չի սկսում բռնությամբ, ընտանեկան բռնությունն իր ծանրությամբ աճում է ժամանակի ընթացքում:

Սա կարևոր հարց է նաև երեխաների պարագայում, քանի որ ոստիկանությունը չի կարող բավարար միջոցներ ձեռնարկել բռնության միջավայրում ապրող կամ վտանգի մեջ գտնվող երեխային պաշտպանելու համար: Ընտանեկան բռնության դեպքում, այն ժամանակ, երբ առկա են քրեական օրենքով նախատեսված հանցագործության հատկանիշներ, հարուցվում է քրեական վարույթ:

[35] Մանրամասն տե՛ս թիվ ՎԴ/1236/05/21 վարչական գործը:

Քրեական վարույթի հարուցման դեպքում բռնություն գործադրած անձի նկատմամբ չի կարող կիրառվել անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումներ, բացառությամբ այն դեպքում, եթե ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի ընտրվել, նրա նկատմամբ բժշկական հաստատությունում հարկադրաբար պահելու մասին որոշում չի կայացվել, և վարույթն իրականացնող մարմինը չի կիրառել պաշտպանության միջոցները:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Օրենքով նախատեսված են մի շարք գործիքներ, որոնցով պետությունը պաշտպանում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց, սակայն դրանք ոչ միշտ են բավարար: Մասնավորապես, այն դեպքերում, երբ բռնություն գործադրողը չի հատում քրեական օրենքով նախատեսված որևէ հանցագործության հատկանիշի շեմը, տվյալ դեպքում, Օրենքով նախատեսված միջոցները կարող են լինել անբավարար, իսկ քրեական օրենքով պատասխանատվության միջոցները չեն կարող վրա հասնել: Մասնավորապես, մի գործով, **ընտանիքի հայրը, ով բնակվում էր ընտանիքից առանձին, տևական ժամանակ անհանգստացնում էր ընտանիքի անդամներին, երեխաներին, հետապնդում էր նրանց դպրոցում, հանրային վայրերում, սակայնն չէր հարուցվում քրեական վարույթ, քանի որ ընտանիքի անդամների նկատմամբ անմիջական բռնություն չէր կիրառվում, միևնույն ժամանակ, Օրենքով նախատեսված միջոցները բավարար չէին կանխելու ընտանիքի հոր շարունակական ոտնձգությունները:** Նման պարագայում, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանելու, իսկ բռնարարին վերահսկելու առումով Օրենքում կատարվել են փոփոխություններ[36], որոնք նախատեսում են ոստիկանությանը լիազորություն ընձեռել էլեկտրոնային հսկողության միջոցով հետևել բռնություն գործադրած անձի վարքագծին, նրա տեղաշարժին:

Օրենքի առանցքային բացերից է հետապնդումը և «զուգընկերոջ» կողմից կատարվող բռնությունը որպես բռնության ձև չնախատեսելը:

Մասնավորապես, Օրենքի 4-րդ հոդվածը, սահմանելով «ընտանիքի անդամներ» հասկացությունը, դրանց մեջ ներառել է՝

- անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները,

- համատեղ բնակվող տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը:

Հետևաբար, ԼԳԲՏԻՔ+ անձը, ով բնակվում է զուգընկերոջ հետ և վերջինիս կողմից ենթարկվում է բռնության, չի կարող Օրենքի իմաստով համարվել ընտանեկան բռնության զոհ:

Նման պայմաններում, ԼԳԲՏԻՔ+ անձինք, ովքեր բռնության են ենթարկվել զուգընկերոջ կողմից, չեն կարող Օրենքի շրջանակում ակնկալել պետության պաշտպանությունը, ինչն ակնհայտորեն Օրենքի բաց է: Պետությունն ունի պոզիտիվ պարտականություն պաշտպանելու բոլոր քաղաքացիների իրավունքները, և նման տարանջատումը չի ապահովում յուրաքանչյուր քաղաքացու, այդ թվում՝ ԼԳԲՏԻՔ+ անձանց, զերծ լինելու բռնությունից և ապավինելու պետական իշխանության պաշտպանությանը: Այս համատեքստում ցանկանում ենք ընդգծել 2023թ. օգոստոսի 20-ին[37] տեղի ունեցած և ողբերգական հետևանքների հանգեցրած դեպքը, երբ տրանս կինը իր բնակարանում դաժանաբար սպանվեց զուգընկերոջ կողմից:

---

[36] Օրենքի փոփոխությունն ընդունվել է 22.03.2023թ.-ին, սակայն դեռ ուժի մեջ չի մտել: Այն ուժի մեջ կմտնի կառավարության կողմից համապատասխան որոշումն ընդունելուց հետո, որը կարգավորելու է Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանը վարելու, տվյալներից օգտվելու կարգը:
[37] Տե՛ս https://www.youtube.com/watch?v=i2Y6fqWClwY:

Սպանությունը, որը լայնորեն լուսաբանվեց հայկական մեդիայում, ևս մեկ անգամ ցույց տվեց այն անհանդուրժող մթնոլորտը, որն առկա է Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ և նրանց նկատմամբ կիրառվող բռնության վերաբերյալ արձագանքները թույլ են տալիս եզրակացնել և պնդել, որ խիստ անհրաժեշտություն է քրեականացնել ատելության խոսքը:

Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ անձինք շարունակում են հետապնդումների, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ենթարկվել ընտանիքում, աշխատավայրում, կրթական հաստատություններում, իրավապահ մարմիններում, զինված ուժերում, առողջապահության ոլորտում, հասարակական և այլ վայրերում: Այս անհանդուրժող վերաբերմունքը պայմանավորված է նաև սեռական կողմնորոշվածության, գենդերային ինքնության, սեռականության վերաբերյալ հասարակությունում տեղեկատվության սահմանափակմամբ և գիտելիքի բացակայությամբ: Հասարակության այն հատվածը, որն ականատես է լինում ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ իրականացված իրավունքների ոտնահարումներին, ճնշումներին, ծաղրին՝ անտարբերություն է ցուցաբերում[38]:

Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ գրեթե յուրաքանչյուր ԼԳԲՏԻՔ+ երեխա[39] ընտանիքում ենթարկվում է բռնության՝ իր սեռական կողմնորոշվածությամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված, և ցավալին այն է, որ բռնության ենթարկված անձանց նկատմամբ բռնությունը կրում է պարբերական բնույթ, իսկ զոհը՝ իր սեռական կողմնորոշվածությամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված չբացահայտված մնալու հիմքով խուսափում է դիմել իրավապահ մարմիններին:

Թեև Հայաստանի կառավարությունը ստորագրել է Ստամբուլյան կոնվենցիան, սակայն դեռ չի վավերացրել այն՝ կոնվենցիայի դեմ հակասական և բացասական ընկալման պատճառով: Կոնվենցիան ինքնանպատակ չէ, այլ ընդունած բոլոր անդամ երկրներն այն կիրառում են իրենց գործող օրենսդրության բացերը վերացնելու նպատակով: Ուստի, Կոնվենցիայի վավերացված չլինելու պարագայում, Հայաստանում ընտանեկան բռնությունների կարգավորման իրավական մեխանիզմներում բացերը շատ են:

Որպես ամփոփում պետք է նշել նաև, որ ՀՀ-ում գործում է նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը, որի նպատակն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը:

Նշված օրենքը կոչված է արգելել գենդերային խտրականությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Սակայն, սույն վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ օրենքների կամ կոնվենցիաների առկայությունը դեռևս բավարար չէ օրենքներում ամրագրված իրավունքները հաստատելու համար, անհրաժեշտ է նաև պետական համարժեք քաղաքականություն, հասարակության բոլոր շերտերի կրթական մակարդակի բարձրացում:

Վերջ բռնությանը

[38] Ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների իրավական կարգավորումներին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն մանրամասն անդրադարձել է «Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում» հետազոտությունան 2021-2022թթ. իրավական զեկույցում, էջեր 32-36, Annual Legal Research arm (rightsidengo.com):

[39] Այս մասին կիսովի հետազոտության 2-րդ գլխում:

1.3 Ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրությունը Հայաստանի Հանրապետությունում 2021թ-ից մինչև 2023թ-ի առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածում

ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1381-Ն «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» որոշման հավելվածով սահմանվում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը (այսուհետ՝ Կարգ): Նշված կարգով կարգավորվում են սոցիալական հարցերի ոլորտում լիազոր հանրապետական գործադիր մարմնի, այն է՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Լիազոր մարմին) կողմից ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման հետ կապված հարաբերությունները:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումն իրականացնում է Լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի, ինչպես նաև վերջիններիս կողմից չգրանցված՝ օրենքով սահմանված աջակցության կենտրոնների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրված տվյալների հիման վրա:

Լիազոր մարմնին ՀՀ ոստիկանությունը տրամադրում է ընտանիքում բռնության այն դեպքերի վերաբերյալ տվյալները, որոնց կապակցությամբ կիրառել է պաշտպանության միջոցներ, դատախազությունը՝ ընտանիքում բռնության հատկանիշներ պարունակող հանցանքներով դատախազի կողմից հանրային կարգով քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ տվյալները, քննչական կոմիտեն՝ իր կողմից իրականացվող քրեական վարույթով ընտանիքում բռնության դեպքերի և դրանց ընթացքի վերաբերյալ տվյալները, դատական դեպարտամենտը՝ ընտանիքում բռնության դեպքերով (վարույթներով) դատարանների կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած պաշտպանական որոշումների և քրեական վարույթներով դատական ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը, աջակցության կենտրոնը՝ տվյալ կառույցներ դիմած ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը, խնամակալության և հոգաբարձության մարմինները, առողջապահության նախարարությունը, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ իրենց հայտնի դարձած տեղեկատվությունը: Հավաքագրած տեղեկատվության հիման վրա՝ Լիազոր մարմինն իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում և դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարում, և յուրաքանչյուր կիսամյակ տեղեկությունները ստանալուց և ամփոփելուց հետո իր պաշտոնական կայքում հրապարակում է հաշվետու ժամանակահատվածի համար վիճակագրական հաշվետվությունը ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ:

Սույն հետազոտության շրջանակներում փորձ է արվել իրավասու մարմիններից տեղեկատվություն է հավաքագրելու վերջին 3 տարվա ընթացքում ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ, որի արդյունքում հնարավոր կլիներ իրական պատկեր և վիճակագրություն ունենալու:

Հիմք ընդունելով Կառավարության նշված որոշումը և հետազոտության առաջնահերթությունները՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը գրություններ է ուղարկել վերը նշված կառույցներին տեղեկատվություն ստանալու նպատակով, մասնավորապես պարզելու համար, թե **2021 թվականից մինչև 2023թ-ի առաջին եռամսյակը քանի ԼԳԲՏԻՔ+ անձինք են դիմել ոստիկանության ստորաբաժանումներ՝ ընտանեկան բռնության ենթարկվելու պատճառով, ինչպես նաև խնդրել ենք տեղեկատվությունը տրամադրել Կարգի համաձայն ոստիկանության կողմից լրացվող ընտանիքում բռնության դեպքի հաշվառման թերթիկի՝ առանց անձին նույնականացնող տվյալների (հարուցվել է քրեական գործ, թե՝ ոչ, ուղղորդում ապաստարան, ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառված**

Ցավով պետք է արձանագրենք, որ **նշված պետական մարմիններն իրենց պատասխաններում հստակ նշել են, որ նման տեղեկատվություն չեն կարող տրամադրել, քանի որ նշված Կարգում անձի գենդերային ինքնորոշման և սեռական կողմնորոշվածության վերաբերյալ դրույթ նախատեսված չէ, ուստի նման տեղեկատվություն համապատասխան մարմիններում չի ձևավորվում[40]:** Ուստի, Կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում հնարավոր չեղավ պաշտոնական վիճակագրություն ունենալ ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ:

Նման վիճակագրության բացակայությունը, թերևս, պետք է վերագրել ռեսուրսների, ինչպես նաև համապատասխան գիտելիքների բացակայությանը: Այդուհանդերձ, Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ անձանց վերաբերյալ որևէ վիճակագրություն չի վարվում, ինչն անմիջականորեն կապված է քաղաքական կամքի բացակայության, ԼԳԲՏԻՔ+ անձանց հասարակության լիարժեք անդամի չընկալման հետ՝ մշակութային և կրոնական առանձնահատկություններով և ազգային այլ հատկանիշներով պայմանավորված:

Հայ հասարակությունում նույնասեռականությունը ընկալվում է որպես «հիվանդություն», «վարակիչ հիվանդություն», և հասարակության զգալի մասը կարծում է, որ ԼԳԲՏԻՔ+ անձանց պետք է բուժել կամ մեկուսացնել հասարակությունից: Հաճախ անհնարին է հայ ավանդապաշտ ընտանիքի տղամարդուն կամ այլ անդամին կրթել, որ իր նույնասեռական երեխան «հիվանդ» չէ, իսկ ծեծով, սպառնալիքներով, փակի տակ պահելով և կրթությունից զրկելով չես կարող փոխել երեխայի սեռական կողմնորոշվածությունը կամ գենդերային ինքնությունը:

Հոմոֆոբիան, տրանսֆոբիան համատարած և խորապես արմատավորված են հայ հասարակության մեջ: Հասարակության վերաբերմունքը ԼԳԲՏԻՔ+ անձանց հանդեպ անհանդուրժող է և հասարակության համար նման անձինք «անընդունելի» են, որակվում են որպես՝ «մեր ազգային ավանդույթներին հակասող»: Ուստի ԼԳԲՏԻՔ+ անձինք շարունակում են հասարակության գրեթե բոլոր ոլորտներում բախվել իրենց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիման վրա խտրական վերաբերմունքի, ատելության, բռնության և սպառնալիքների:

Ակնհայտ է, որ քաղաքական կամքի բացակայության պայմաններում իրավական դաշտում ևս օրենքները չեն մշակվում այնպես, որ անմիջականորեն պաշտպանեն ԼԳԲՏԻՔ+ անձանց իրավունքները: Գրեթե բոլոր օրենքներն այնպես են մշակվում, որ նրանցում անմիջական նշում չլինի ԼԳԲՏԻՔ+ անձանց վերաբերյալ, քանի որ նման օրենքները բուռն քննարկման և մի շարք խմբերի կողմից մեծ ընդվզումների առիթ կդառնան:

Ավելին, պետք է արձանագրել, որ տրանսսեքսուալիզմը (այս բառը գրված է Դասակարգչում և ուղիղ մեջբերում է) առ այսօր Հայաստանի Հանրապետությունում համարվում է հիվանդություն: ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. թիվ 871-Ն հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչը (այսուհետ՝ Դասակարգիչ):

Դասակարգիչը համընդհանուր փաստաթուղթ է, այն կիրառվում է հիվանդությունների և բնակչության առողջության և բնական շարժի հետ կապված տարբեր փաստաթղթերում գրանցված առողջությանը վերաբերող տարբեր խնդիրների դասակարգման համար:

[40] Կազմակերպության կողմից պետական մարմիններին ուղղված գրությունների պատասխանները ներկայացված են սույն զեկույցում:

Ըստ դասակարգչի, տրանսսեքսուալիզմը համարվում է հիվանդություն, որը ներառված է F64.0 դասում և բնութագրվում է որպես հակառակ սեռի կերպարով ապրելու և շրջապատի կողմից ընդունվելու ցանկություն, որը սովորաբար ուղեկցվում է սեփական անատոմիական կառուցվածքից և սեռային պատկանելությունից դժգոհ լինելու զգացումով: Հիվանդը ցանկանում է վիրահատվել կամ ստանալ հորմոնային բուժում, որպեսզի հնարավորինս համապատասխանի նախընտրած սեռին:

Պետք է արձանագրենք նաև, որ պետության կողմից կա անհավասար մոտեցում սեռական կողմնորոշվածությամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված հանցագործությունների դեպքերի ճիշտ որակմանը: Գաղտնիք չէ, որ ոտիկանությունը, գլխավոր դատախազությունը, քննչական մարմինները և մարդու իրավունքների պաշտպանը տարվա ընթացքում պարբերաբար զեկույցներ են հրապարակում հանցագործությունների և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Այնուհանդերձ, նրանցից ոչ մեկը չի հավաքում և չի մշակում հանցագործությունների տեսակավորված տվյալներ՝ կոնկրետ գենդերային ինքնությամբ և սեռական կողմնորոշվածությամբ պայմանավորված հանցագործությունների վերաբերյալ: Նշվածները փաստում են նաև մեր կողմից վերը թվարկած իրավապահ մարմիններին հասցեագրված գրությունների պատասխանները:

Փաստն այն է, որ բոլոր վերը թվարկած մարմինները տվյալները մշակում են ըստ ձևավորված ընդհանուր պրակտիկայի, որի պարագայում հանցագործության տեսակը սահմանվում է ըստ Քրեական օրենսգրքի ընդհանուր հոդվածի՝ չհստակեցնելով հոդվածների մասերը կամ կետերը, որոնցով էլ հաճախ սահմանված են լինում հանցակազմի այնպիսի ծանրացնող դրսևորումները, ինչպիսիք են ատելության շարժառիթները և խտրականությունը՝ պայմանավորված սեռական կողմնորոշվածությամբ և գենդերային ինքնությամբ, և այլն:

Որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն՝ Հայաստանը միջազգային պարտավորություն ունի ստեղծելու խտրական գործելակերպի դեմ պայքարի արդյունավետ իրավական դաշտ և իրավական պաշտպանության մեխանիզմներ: Այդ պարտավորությունը ներառում է, մասնավորապես, ատելության հիմքով կատարվող հանցագործություններին վերաբերող տվյալների հավաքման և մշակման այնպիսի արդյունավետ մեխանիզմներ ունենալու պարտավորությունը, որոնք ի զորու են բացահայտել ոչ միայն այդ հանցագործությունների թիվը, այլև ատելության հիմքով կատարվող հանցագործություն ներառող խտրական գործելակերպի միտումները:

Հայաստանը չի իրագործել արդյունավետ միջոցառումներ խտրականության դեմ պայքարի իր օրենսդրությունը և պրակտիկան բարեփոխելու և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Չնայած օրենքների բարեփոխման ուղղությամբ անցյալում ձեռնարկված քայլերին՝ պետությունը դեռևս չի ընդունել խտրականության դեմ պայքարի առանձին օրենք, այլ փոխարենը պարբերաբար օրենքները վերանայվում են, խտրականությունը արգելող կոնկրետ հոդվածներ են ավելանում, որոնք արգելում են խտրականությունը լայն իմաստով:

Ասվածը վկայում է նաև ՓԻՆՔ իրավապաշտպան ՀԿ-ի կողմից արձանագրված ընտանեկան բռնության դեպքը, որը տեղի է ունեցել 2022թ-ի հունիսի 9-ին Երևանի Անգլիական այգում: Հայրը բռնության է ենթարկել դստերը՝ բազմաթիվ հարվածներ հասցնելով դեմքի և պարանոցի շրջանում՝ նրան ֆիզիկական վնասվածքներ և ցավ պատճառելով, և միաժամանակ հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանքներ: Դեպքի առթիվ տուժողը՝ Ս.Մ.-ն, 2022թ. հունիսի 10-ին հաղորդում է ներկայացրել Ոստիկանության Կենտրոնական բաժին: Նա նաև նշել է, որ տարիներ շարունակ իր սեռական կողմնորոշման համար հոր և մոր կողմից ենթարկվել է ընտանեկան բռնության: Ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ և 137.1-րդ հոդվածների հատկանիշներով քրեական գործ է հարուցվել: Քրեական գործն ընթացել է իրավապահ մարմինների կողմից թույլ տրված քրեադատավարական մի շարք խախտումներով: Քրեական գործ հարուցելու որոշման մեջ որևէ մատնանշում չի եղել այն մասին, որ տուժողն ընտանեկան բռնության է ենթարկվել հոր և մոր կողմից: Քրեական գործը հարուցվել է ոչ թե ընտանեկան բռնության ենթարկվելու փաստով, այլ ծեծի և ծանր վիրավորանք հասցնելու հոդվածներով[41]:

[41] Սույն դեպքի մանրամասները ներկայացված են ՓԻՆՔ ՀԿ-ի կայքում, Ընտանեկան բռնության դեպք Երեւանում, https://www.pinkarmenia.org/news/dvcase-yerevan/:

Այդուհանդերձ, քանի որ անհրաժեշտություն կար ուսումնասիրել նաև ընտանեկան բռնության դեպքերով ՀՀ-ում վարվող վիճակագրությունը, ուստի «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հարցումներ է ուղարկել իրավասու մարմիններին՝ ստանալու ընդհանուր տեղեկատվություն Հայաստանում 2021-23թթ-ի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնությունների վերաբերյալ:

Փաստենք, որ պետությունը չի վարում վիճակագրություն ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում ընտանեկան բռնությունների վերաբերյալ[42], ուստի դրա բացակայությունը ևս խոչընդոտ հանդիսացավ ստանալու իրական վիճակագրական պատկեր՝ ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում ընտանեկան բռնությունների վերաբերյալ:

Ստացված պաշտոնական տվյալներն այսպիսինն են.

<u>ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության</u> 17.07.2023թ-ին տրամադրած տեղեկատվության համաձայն՝

«**2021թ-ի ընթացքում** ըստ օպերատիվ ամփոփագրերի՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում գրանցվել է **1644 ընտանեկան բռնության դեպք:** Գրանցված ընտանեկան բռնության դեպքերով ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 528 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 544 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում: 2021թ-ի ընթացքում քննված ընտանեկան բռնության դեպքերից 101-ով հարուցվել են քրեական գործեր (որից 21-ն ուղարկվել է դատարան, 80-ը՝ կարճվել), 371-ով՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է:

2022թ-ի ընթացքում, ըստ օպերատիվ ամփոփագրերի, ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում գրանցվել է **1547 ընտանեկան բռնության դեպք:** Գրանցված ընտանեկան բռնության դեպքերով ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 556 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 619 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում: 2022թ-ի ընթացքում քննված ընտանեկան բռնության դեպքերից 138-ով հարուցվել են քրեական գործեր (որից՝ 54-ն ուղարկվել է դատարան, 82-ը կարճվել են), 195-ով՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է:

2023թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում ըստ օպերատիվ ամփոփագրերի՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում գրանցվել է **817 ընտանեկան բռնության դեպք:** Գրանցված ընտանեկան բռնության դեպքերով ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 279 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացրել են նախազգուշացում, իսկ 351 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում: 2023թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում քննված ընտանեկան բռնության դեպքերից 116-ով հարուցվել են քրեական գործեր, որից՝ **92-ն ուղարկվել են դատարան, 21-ը կարճվել են»:**

ՀՀ գլխավոր դատախազության 28.07.2023թ-ին տրամադրած տեղեկատվության համաձայն՝

«Ընտանիքում բռնության հատկանիշներ պարունակող հանցանքներով դատախազների կողմից հանրային կարգով քրեական հետապնդում իրականացվել է **73 քրեական գործով (վարույթով), որից 51-ը 2021թ-ին, 22-ը՝ 2022թ-ին»:**

Միաժամանակ հայտնել են, որ 2023թ-ին ընտանիքում բռնության հատկանիշներ պարունակող հանցանքներով դատախազների կողմից հանրային կարգով քրեական հետապնդում իրականացնելու դեպքերի վերաբերյալ վիճակագրություն դեռևս ամփոփված չէ, իսկ քրեական վարույթներով կիրառված պաշտպանության միջոցների վերաբերյալ վիճակագրություն չի վարվում:

[42] Իրավապաշտպան կազմակերպություններից ստացված վիճակագրական տվյալներին կանդրադառնանք Զեկույցի երկրորդ մասում:

ԲԴԽ աշխատակազմ Դատական դեպարտամենտի 17.07.2023թ-ին տրամադրած տեղեկատվության համաձայն՝

«2021 թվականից 01.07.2023թ. ընկած ժամանակահատվածում կայացվել են 37 պաշտոնական որոշում, և 73 քրեական գործերով առկա են օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր»:

<u>ՀՀ քննչական կոմիտեի կողմից</u> հրապարակված տվյալների՝

2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վարույթում, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 556 քրեական գործ[43]:

556 քրեական գործից 129-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 135 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 3-ն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար, 252 քրեական գործի վարույթ կարճվել է, որից 112-ը՝ արդարացնող, իսկ 140-ը՝ ոչ արդարացնող հիմքով, 31 քրեական գործի վարույթ կասեցվել է, որից 17-ը հանցանք կատարած անձին հետախուզելու, իսկ 14-ը՝ հանցանք կատարած անձը հայտնի չլինելու պատճառաբանությամբ: 8 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 53-ը՝ միացվել է, 80 քրեական գործ փոխանցվել է 2022 թվական:

Վերը նշված քրեական գործերով 272 անձ ներգրավվել է որպես մեղադրյալ, որից 8-ը եղել են 14-18 տարեկան, 113-ը՝ 18-35 տարեկան, 151-ը՝ 35 տարեկանից բարձր: 8 մեղադրյալ եղել են նախկինում դատապարտված:

Ընտանիքում կատարված հանցագործություններից 19-ը կատարվել են մոր կողմից, որից 12-ը՝ անչափահաս զավակի նկատմամբ, 27-ը՝ հոր կողմից, որից 16-ը՝ անչափահաս զավակի նկատմամբ, 1-ը՝ խորթ մոր կողմից՝ անչափահաս խորթ զավակի նկատմամբ, 2-ը՝ խորթ հոր կողմից, 14-ը՝ եղբոր/քրոջ կողմից, 20-ը՝ զավակի կողմից (այդ թվում՝ որդեգրված), 7-ը՝ ամուսիններից կնոջ կողմից, 169-ը՝ ամուսիններից տղամարդու կողմից, 1-ը՝ թոռան կողմից, 6-ը՝ ամուսնու ծնողների կողմից, 6-ը՝ հարսի/փեսայի կողմից:

Նշված 556 քրեական գործով 485 անձ ճանաչվել է որպես տուժող, որից 54-ը՝ մինչև 12 տարեկան, 12-ը՝ 12-14 տարեկան, 11-ը՝ 14-16 տարեկան, 8-ը՝ 16-18 տարեկան, 181-ը՝ 18-35 տարեկան, 219-ը՝ 35-ից բարձր:

2022թ. թվականի ընթացքում Կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 960 քրեական վարույթ, որից 122-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 126 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 301 քրեական վարույթ կարճվել է, որից 150-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 151-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 8 քրեական վարույթ կասեցվել է՝ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի հիմքերով: 16 քրեական վարույթ ուղարկվել է ըստ ենթակայության, 130-ը՝ միացվել է, 383 քրեական վարույթ փոխանցվել է 2023թ. հունվար ամիս[44]:

Դատարան ուղարկված վարույթներով 125 մեղադրյալներից 108-ը հանդիսացել են ամուսիններ, 4-ը՝ տատ կամ պապ, 5-ը՝ քույր կամ եղբայր, 8-ը՝ զավակ կամ թոռ:

125 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով[45] քրեական հետապնդում չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական հետապնդումը:

---

[43] Մանրամասն տե՛ս https://www.investigative.am/news/view/yntanekan-brnutyunner-vichakagrutyun_2021.html:
[44] Մանրամասն տե՛ս https://www.investigative.am/news/view/[20222]-yntanekan-brnutyan-veraberyal-ampopum.html :
[45] Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «ոչ արդարացնող» («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով:

Ինչ վերաբերում է 2023թ-ի կիսամյակային տվյալներին, ապա դրանք դեռևս մշակման փուլում են և հրապարակված չեն Քննչական կոմիտեի պաշտոնական կայքում:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում են նաև ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները՝ աջակցության կենտրոնները և ապաստարանները:

ՀՀ-ում գործող աջակցության կենտրոնների և ապաստարանների վերաբերյալ տեղեկատվությունը փորձեցինք ճշտել **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանից:** Հետաքրքիր էր ստանալ նաև քանակական տեղեկատվություն, թե 2021թ-ից մինչև 2023թ-ի առաջին կիսամյակը քանի անձ է օգտվել նշված կառույցներից:

Ինչպես տեղեկացանք **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հասցեագրված գրության պատասխանից,** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայությունների մատուցման նպատակով համաֆինանսավորում է 2 ապաստարանի գործունեություն: Ապաստարանի ծառայությունները ընտանիքում բռնության ենթարկված անձանց տրամադրվում են դրամաշնորհային մրցութային կարգով հաղթող ճանաչված «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից: 2023 թվականին ՀՀ ԱՍՀ նախարարության և «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիման վրա նախատեսվել է ծառայություններ տրամադրել ընտանիքում բռնության ենթարկված 30 կնոջ (2 ապաստարանը միասին՝ 60):

Ապաստարանում կարող են տեղավորվել ընտանիքում բռնության ենթարկված կանայք, անհրաժեշտության դեպքում նաև նրանց խնամքի տակ գտնվող անձինք: Բռնության ենթարկված կանայք ապաստարանում տեղավորվում են առանձին սենյակներում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ընտանիքում բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ աջակցություն տրամադրելու նպատակով իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

- *«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»,*
- *«Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն»,*
- *«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»:*

Ապաստարանի կողմից տրամադրվող ծառայությունները կարող են ներառել՝ 1. շահառուներին անհատույց, ապահով բնակելի տարածքի տրամադրում, 2. սոցիալական աջակցություն, 3. հոգեբանական աջակցություն, 4. իրավաբանական օգնություն, 5. բժշկական օգնություն, 6. սննդով և հագուստով ապահովում (երեխաներին նաև դասապատրաստման համար անհրաժեշտ կահավորմամբ և պիտույքներով):

Ապաստարանի ծառայությունների համար պահանջվող ֆինանսական ծախսը հոգում է «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ պետության համաֆինանսավորմամբ:

2021 թվականին ապաստարանի ծառայություններից օգտվել են 160 կին և երեխա, 2022թ-ին՝ 201 կին և երեխա, 2023թ-ի առաջին կիսամյակին՝ 124 կին և երեխա:

Հատկանշական է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առկա վիճակագրության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ապաստարանում ԼԳԲՏԻՔ+ անձինք չեն տեղավորվել:

Ամփոփելով վերոգրյալը, փաստենք, որ այս թվերը խոսում են Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության դեպքերի տարածվածության, ինչպես նաև, դրանց վերաբերյալ հստակ և միասնական վիճակագրության բացակայության մասին: Չի բացառվում, որ ընտանեկան բռնության արձանագրված դեպքերից մի քանիսը կատարված լինեն՝ պայմանավորված անձի սեռական կողմնորոշվածության կամ գենդերային ինքնության հիմքով, սակայն նման վիճակագրության բացակայության պայմաններում հնարավոր չէ հստակ թվեր ունենալ ընտանեկան բռնության զոհ դարձած ԼԳԲՏԻՔ+ անձանց վերաբերյալ:

Ուստի արձանագրենք, որ օրենսդրական առումով առկա է բաց, որի հետևանքով հնարավոր չէ վիճակագրություն վարել և պարզել, թե տարեկան քանի ԼԳԲՏԻՔ+ անձինք են ենթարկվում ընտանեկան բռնության: Ինչպես և մեր հետազոտության մասնակիցներից պարզեցինք, ընտանեկան բռնության ենթարկված անձինք հաճախ չեն դիմում իրավապահ մարմիններին՝ վստահություն չունենալու պատճառով, ինչի մասին կխոսվի հետազոտության հաջորդ բաժնում:

ՄԱՍ II. «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԼԳԲՏԻՔ+ ՁՈՀԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2.1 Հետազոտության կազմակերպումը և սոցիալ բնութագրիչները

Հետազոտությանը մասնակցել են 16 և բարձր տարիքի ԼԳԲՏԻՔ+ անձինք: Հետազոտության մեջ ընդգրկվել են **300** կատարված հարցազրույցներից ԼԳԲՏԻՔ+ անձանց կողմից ներկայացված 61 դեպքեր, որոնք տեղի են ունեցել 2021 թվականի հունվարից մինչև 2023 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության համառոտ նկարագրությունը և կառուցվածքը ներկայացված են *Աղյուսակ 1.-ում*:

Աղյուսակ 1. «Ընտանեկան բռնության ԼԳԲՏԻՔ+ զոհերի իրավիճակը Հայաստանում» հետազոտության համառոտ նկարագրությունը

Հետազոտության անվանումը	**«Ընտանեկան բռնության ԼԳԲՏԻՔ+ զոհերի իրավիճակը Հայաստանում»**
Հետազոտության ժամանակահատվածը	Հետազոտությունն իրականացվել է ութամսյա ժամանակահատվածում
Հետազոտության աշխարհագրական ծածկույթը	Երևանը և ՀՀ մարզերը
Հետազոտության թիրախային հանրությունը	16 տարեկանից բարձր ԼԳԲՏԻՔ+ անձինք
Ընտրանքի չափը	300 իրականացված հարցումներ
Հետազոտության իրականացման փուլերը	▪ Հետազոտության մեթոդոլոգիայի մշակում ▪ Հիմնական հասկացությունների սահմանում ▪ Խորքային հարցազրույցների հարցաթերթիկների մշակում ▪ Հետազոտության իրավական մասի նախագծում ▪ Հարցաթերթիկների տվյալների մուտքագրում ▪ Քանակական վերլուծության իրականացում ▪ Հարցազրույցների որակական վերլուծություն ▪ Հարցումներ պետական մարմիններին և ՀԿ-ներին ▪ Իրավական մասի թարմացում ▪ Ներածության և հետազոտության անցկացման վերաբերյալ հատվածի մշակում ▪ Եզրակացության և առաջարկությունների մշակում ▪ Հետազոտության վերջնական տարբերակի խմբագրում, սրբագրում

Հետազոտությանը մասնակցած անձանց ներկայացրած և ուսումնասիրված ընտանեկան բռնության 61 (100%) դեպքերն ունեն հետևյալ սոցիալ բնութագրիչները (տե՛ս Աղյուսակ 2.):

Աղյուսակ 2. Հետազոտության մասնակիցների սոցիալ բնութագրիչները

Սոցիալ բնութագրիչներ	Ընդամենը, մարդ	Ընդամենը (%)
Տարիքը՝ միջադեպը տեղի ունենալու պահին		
▸ 16-19	25	41
▸ 20-25	22	36
▸ 26-30	5	8,2
▸ 31-35	4	6,6
▸ 36-40	4	6,6
▸ 41-60	0	0
▸ 61 և բարձր	1	1,6
Ընդամենը	*61*	*100*
Գենդեր ու գենդերային ինքնություն		
▸ Տղամարդ	19	31,2
▸ Կին	30	49,1
▸ Տրանս տղամարդ	4	6,6
▸ Տրանս կին	5	8,2
▸ Ագենդեր	1	1,6
▸ Ցիսգենդեր	2	3,3
Ընդամենը	*61*	*100*
Սեռական կողմնորոշվածություն		
▸ Գեյ	24	39,4
▸ Լեսբի	13	21,3
▸ Բիսեքսուալ	12	19,7
▸ Հետերոսեքսուալ	11	18
▸ Չեմ ցանկանում պատասխանել	1	1,6
Ընդամենը	*61*	*100*
Կրթությունը		
▸ Բարձրագույն/հետբուհական	22	36
▸ Նախամասնագիտական/միջին մասնագիտական	9	14,8
▸ Միջնակարգ/ավագ դպրոց (10-12-րդ դասարան)	29	47,6
▸ Հիմնական և ցածր (մինչև 9-րդ դասարան)	1	1,6
▸ Կրթություն չունեմ	0	0
Ընդամենը	*61*	*100*

Հետազոտության մասնակիցները այն հարցին, թե որքանով են մարդիկ տեղյակ իրենց **սեռական կողմնորոշվածությունից, գենդերային ինքնությունից կամ սեռական հատկանիշներից,** պատասխանել են հետևյալ կերպ **(տե՛ս Աղյուսակ 3.)**, ընդ որում, հնարավորություն են ունեցել ընտրելու մեկից ավելի պատասխաններ:

Աղյուսակ 3. Ինչքանո՞վ են մարդիկ տեղյակ հետազոտության մասնակիցների սեռական կողմնորոշվածությունից, գենդերային ինքնությունից կամ սեռական հատկանիշներից

Պատասխաններ	Ընդամենը, մարդ
Ողջ ընտանիքս գիտի	15
Միայն ծնողս/ծնողներս գիտեն	10
Միայն եղբայրներս/քույրերս գիտեն	6
Ընկերներս գիտեն	29
ԼԳԲՏԻՔ+ համայնքում տեղյակ են	22
Աշխատավայրում տեղյակ են	9
Համալսարանում տեղյակ են	1
Բոլորը գիտեն	5
Ոչ ոք չգիտի	4
Չեմ ցանկանում պատասխանել	10
Չեմ քննարկում այդ թեման ոչ մեկի հետ	1

Բռնության դեպքերը տեղի են ունեցել ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում **(տե՛ս Աղյուսակ 4.)**, օրվա տարբեր ժամերին **(տե՛ս Աղյուսակ 5.): Դեպքերը կատարվել են ինչպես բռնարարի տանը, այնպես էլ՝ զոհի տանը (տե՛ս Աղյուսակ 6.): Շատ հաճախ բռնարարը և զոհը ապրում են համատեղ՝ նույն հարկի տակ, հետևաբար հետազոտության մասնակիցները երկու պատասխանները նշել են միաժամանակ:**

Աղյուսակ 4. Ո՞ր մարզում/համայնքում է տեղի ունեցել դեպքը

Դեպքերի բաշխվածությունը քաղաքային և գյուղական համայնքներերում	Դեպքերի քանակը	Ընդամենը (%)
Երևան	34	55,8
Արագածոտն	0	0
Արարատ	9	14,8
Արմավիր	3	4,9
Գեղարքունիք	1	1,6
Լոռի	2	3,3
Կոտայք	8	13,1
Շիրակ	1	1,6
Սյունիք	0	0
Վայոց ձոր	0	0
Տավուշ	3	4,9
Ընդամենը	*61*	*100*

Աղյուսակ 5. Ո՞ր ժամին է տեղի ունեցել դեպքը/դեպքերը

Ժամը	Դեպքերի քանակը	Ընդամենը (%)
▸ *Առավոտյան՝ 07:00-12:00*	14	16
▸ *Օրվա ընթացքում՝ 12:00-18:00*	29	38
▸ *Երեկոյան՝ 18:00-00:00*	12	32
▸ *Գիշերը՝ 00:00-07:00*	6	14
Ընդամենը	*61*	*100*

Աղյուսակ 6. Որտե՞ղ է տեղի ունեցել դեպքը/դեպքերը

Դեպքի վայրը	Դեպքերի քանակը	Ընդամենը (%)
▸ Զոհի տանը	14	23
▸ Բռնարարի տանը	8	13,1
▸ Զոհը և բռնարարը բնակվում են համատեղ նույն տանը	23	37,7
▸ Ընտանիքի այլ անդամի տանը (տատիկ, պապիկ, մորաքույր, քեռի և այլն)	5	8,2
▸ Աշխատավայրում, հասարակական շենքում	3	4,9
▸ Գյուղական տարածքում, անտառում, այգում, ճամբարում	3	4,9
▸ Փողոցում, նրբանցքում, կայանատեղում, մեքենայում	4	6,6
▸ Այլ	1	1,6

Հետազոտության ընթացքում դիտարկված 61 բռնության դեպքերից 21-ը (34,4%) տեղի են ունեցել 2021թ-ին, 24-ը (39,4%)՝ 2022թ-ին, 11-ը (18%)՝ 2023թ-ի մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում, իսկ հետազոտության մասնակիցներից 5-ը (8,2%) պատասխանել են, որ դեպքերը կրել են մշտական բնույթ:

> *«Ցավալի է, բայց ես պարբերաբար ծեծի եմ ենթարկվում ծնողներիս կողմից, վիրավորանքներով ու արժանապատվությունս նվաստացնող բառերով են ինձ դիմում տանը (գոմիկ և նմանատիպ այլ արտահայտություններ): Նույնն էլ քոլեջում է, անընդհատ ծաղրում են ինձ: Մի անգամ էլ ծնողներս ծեծեցին ինձ ու պահեցին տանը՝ փակի տակ, չէին թողնում շփվեմ որևէ մեկի հետ»* -
> հատված հետազոտության հարցաթերթիկից,
> **նույնասեռական տղամարդ:**

Վերլուծելով դեպքերը, հանգում ենք այն եզրակացությանը, որ զոհերը ընտանեկան բռնության են ենթարկվում հիմնականում ծնողների կողմից, առավել հաճախ՝ մոր կողմից, իսկ առավել ագրեսիվ՝ հոր **(Տե՛ս Գծապատկեր 1.):**

> *«Քանի որ մայրս մահացել է, հայրս երկրորդ անգամ է ամուսնացել: Տան գործերի հետ կապված խորթ մայրս հարց բարձրացրեց, որ տան կենցաղային հարցերով զբաղվեմ, բայց ես պատասխանեցի, որ չեմ հասցնում, քանի որ աշխատում եմ: Հայրս խոսակցությանը միջամտեց, ինքն էլ պնդեց, որ կենցաղային գործերով զբաղվեմ: Արդյունքում խոսակցությունը վերածվեց վիճաբանության: Հայրս շշով հարվածեց գլխիս…»* - հատված հետազոտության հարցաթերթիկից,
> **նույնասեռական կին:**

Գծապատկեր 1. Ու՞մ կողմից եք ենթարկվել ընտանեկան բռնության:



Ընտանիքներում հոր կողմից արձանագրված բռնությունների հաճախակիությունը անմիջականորեն կապված է Հայաստանում ավանդական ընտանեկան, մշակութային պատկերացումներով, գենդերային կարծրատիպերի բարձր մակարդակով, հասարակության հայրիշխանական լինելով, մասնավորապես՝ ընտանիքում տղամարդը պետք է լինի որոշումներ կայացնողը: Ավելին, այդ մշակութային, քաղաքական և այլ գործոնների ազդեցությունն անմիջական կապ ունի հասարակության հոմոֆոբ և տրանսֆոբ լինելու հետ և փաստ է, որ հասարակության վերաբերմունքը դրական չէ ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ, իսկ հայկական ավանդապաշտ ընտանիքներում՝ յուրաքանչյուր ծնող ունի կախվածություն հասարակական կարծիքից, որն ավելի ծայրահեղ է ՀՀ մարզերում: **Առավել հաճախ ծնողները համատեղ են բռնություն կիրառում երեխաների նկատմամբ:**

«Դեպքի ժամանակ 16 տարեկան էի: Մամայիս հեռախոսով մտա իմ ինստագրամի էջ, հետո մոռացա log out անել, նոր մամայիս տալ հեռախոսը: Մամաս երբ վերցնում է հեռախոսը, տեսնում է, որ ինստագրամիս էջն ակտիվ է ու մտնում է իմ անձնական էջ: Բնական է, իմ էջում կարդում է հաղորդագրություններս ու իմանում է իմ սեռական կողմնորոշման մասին: Տանը մեծ անախորժություններ են լինում: Ծնողներս արգելում են ինձ շարունակել սովորել քոլեջում, մեկ ամիս չեմ հաճախել դասերի: Տանն եմ եղել՝ ծնողներիս հսկողության տակ, չեմ ունեցել կապի միջոցներ, չեմ շփվել ընկերներիս հետ, հեռախոսը և ինտերնետն արգելված էին ինձ համար»– հատված հետազոտության հարցաթերթիկից,
երկսեռական տղամարդ:

Հարցումներից և հավաքագրված տվյալներից կարող ենք ենթադրել, որ քաղաքաբնակ, երիտասարդ մայրերը/կանայք, որոնք ունեն նաև զբաղվածություն, համեմատաբար հանդուրժող են իրենց ԼԳԲՏԻՔ+ երեխաների նկատմամբ, հետևաբար ավելի չեզոք են, իսկ ընտանեկան վեճերի ժամանակ փորձում են աջակցել, օգնել իրենց երեխաներին հոր կողմից բռնության դեպքում:

«Իմ մազերը կարճ են, ինչը ծնողներիս մոտ կասկած է առաջացրել իմ սեռական կողմնորոշվածության մասին: Ծնողներս կասկածել են, որ ես նույնասեռական կին եմ: Մի օր հայրս սկսեց բռնանալ իմ վրա, ասեց, որ չի ուզում իմ նման աղջիկ ունենալ, հիասթափված է: Մայրս ավելի մեղմ էր, ինձ աջակցում էր: Հայրս բարկացավ ու ինձ փակեց նկուղում, մտածելով, որ դա իմ վրա կարող է ինչ-որ ձև ազդել: Չեմ ուզում պատմել ինչ դաժան պահ էր, ինչ կոիվներ եղավ: Բայց գիշերը նկուղից հանեց ինձ, եկավ դուռը բացեց, դուրս եկա, քանի որ մայրս էր շատ խնդրել հորս» – հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական կին:

Սակայն արձանագրենք, որ շատ դեպքերում, մայրերն իմանալով իրենց երեխաների սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության մասին, իրենք են հայտնում հորը՝ խուսափելով մենակ կրել այդ «պատասխանատվությունը», որպեսզի ընտանիքի տղամարդու կողմից կինը չդառնա իր երեխայի «հանցակիցը»:

«Մայրս իմանում է իմ սեռական կողմնորոշվածության մասին, հայտնում է հորս: Մեծ վիճաբանություն է սկսվում: Ինձ ծեծում են, դուռն են ջարդում վրաս, ջարդած դռան ապակիներով ձեռքերս են վնասում: Տանն էին ինձ պահում, որ ոչ մեկի հետ չշփվեմ: Քանի որ ձեռքերս ահավոր փրթված էին, ինձ տարան բժշկի, բժիշկները կարել էին ձեռքերս ու գիպսի մեջ դրել, որպեսզի չշարժեմ ու կարերը չբացվեն: Ունեցել եմ վնասվածքներ նաև վերին շուրթի շրջանում… » - հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական տղամարդ:

Հայ հասարակությունում երեխայի կրթությամբ և առօրյայով հիմնականում զբաղվում են կանայք, իսկ հայ տղամարդիկ հիմնականում աշխատում են և միայն երեկոյան են ընտանեկան հարցերի մեջ ներգրավվում: Երեխայի մոտ առաջացած ցանկացած խնդրի դեպքում տղամարդիկ առաջին հերթին մեղադրում են իրենց կանանց՝ երեխային «ոչ ճիշտ դաստիարակելու մեջ»: Ուստի մայրերը միշտ խիստ են վերաբերվում իրենց երեխաների հետ կապված ցանկացած հարցի, քանի որ դրանք անմիջականորեն կարող են վերագրվել իրենց՝ որպես երեխայի դաստիարակության թերացում:

Հարցումները ցույց են տալիս, որ մայրերն ավելի խիստ, հետևողական և ուշադիր են իրենց երեխաների վարքագծի, արտաքին տեսքի նկատմամբ, քան՝ տղամարդիկ:

> *«Մայրս նկատեց, որ շատ եմ հետևում հիգիենային, սկսեց հարցնել ինչի եմ այդպես անում: … Մայրս սկսեց գոռգոռալ, անիծել, վատ բառեր ասել, տատիկս եկավ միջամտեց, որ չգոռգոռա, հանգստանա: Ես որոշեցի տանից դուրս գալ, մայրս սկսեց չթողել, հարվածել ինձ, ինձ սկսեց հարվածել նաև փոքր եղբայրս: Տատիկս ինձ էր օգնում, որ ինձ բան չլինի: Ես գնացի իմ սենյակ, տուն եկավ հայրս, մայրս հորս պատմեց, հայրս ինձ գցեց բազմոցին ու սկսեց ինձ խեղդել: Ծնողներս գոռում էին, որ ես իրենց խայտառակում եմ, որ եթե ես ԼԳԲՏ համայնքի մարդկանց ընդունում եմ, ուրեմն ես էլ եմ այդպիսին, ես էլ «մարդ չեմ…»* -
հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական տղամարդ:

Հետազոտության մասնակիցները նաև անդրադարձել են ընտանեկան բռնությունների ժամանակ բռնարարների սեռին, տարիքին, գենդերային ինքնությանը, սեռական կողմնորոշվածությանը: Ըստ մասնակիցների պատասխանների՝ բռնարարներն ունեցել են հետևյալ սոցիալ բնութագրիչները **(տե՛ս Աղյուսակ 7.):**

Աղյուսակ 7. Բռնարարների սոցիալ բնութագրիչները

Արդյո՞ք բռնարարը չափահաս (18 տարին լրացած անձ) և գործունակ անձ էր դեպքի կատարման ժամանակ		
▸ Չափահաս	58	95,1
▸ Անչափահաս	1	1,6
▸ Չգիտեմ	2	3,3
Ընդամենը	*61*	*100*
Գենդեր ու գենդերային ինքնություն		
▸ Տղամարդ	41	67,2
▸ Կին	26	42,6
▸ Չգիտեմ	4	6,6
Սեռական կողմնորոշվածություն		
▸ Հետերոսեքսուալ	39	63,9
▸ Չգիտեմ	22	36,1
Ընդամենը	*61*	*100*

Ալկոհոլային խմիչքի օգտագործումն անմիջական ազդեցություն ունի բռնարարի կողմից ֆիզիկական բռնություն կիրառելու հարցում: Մասնակիցներից մի քանիսը նաև նշել են, որ բռնարարները սեր են ունեցել ալկոհոլի նկատմամբ և պարբերաբար օգտագործել են:

«…Գնացի, տաքսին տարավ իր նշած տեղը: Մենակում մենակ էր: Զգացի խմած էր, ինձ էլ առաջարկեց խմել, չհրաժարվեցի: Ասեց հանվեմ: Սկսեց ստիպել իրեն բավարարեմ ոնց իր պատկերացումներն են: Ես հրաժարվեցի, բայց ինքը ստիպեց, ձեռքերս բռնեց, մազերս քաշեց: Շատ կոպիտ էր հետս, ինքը միշտ էր տենց կոպիտ լինում, որ խմած էր լինում…» – հատված հետազոտության հարցաթերթիկից,
տրանսգենդեր կին:

2.2 Ընտանեկան բռնության շարժառիթները և դրդապատճառները

Բռնության մասին բարձրաձայնելը, օգնություն ակնկալելը բռնության դեմ պայքարելու կարևոր նախապայմաններն են: Ուստի, որևէ խնդիր վերացնելու կամ նվազեցնելու համար, նախևառաջ, անհրաժեշտ է դրա մասին բարձրաձայնել: Սակայն, ընտանեկան բռնությունների լատենտայնությունը հաշվի առնելով, մեր իրականությունում դրանց մասին հիմնականում լռում են:

Ընտանեկան բռնությունները տարբերվում են բռնության այլ տեսակներից նախ նրանով, որ բռնությունը տեղի է ունենում մեկ կամ մի քանի անձի կողմից, ում բռնության ենթարկվածը սիրում է, վստահում, հարազատներ են, արյունակիցներ: Ընտանեկան բռնությունն իր ծանրությամբ մեծանում է ժամանակի ընթացքում:

«Ծնողներս որոշել էին ամուսնալուծվել, քանի որ հորս կողմից պարբերաբար բռնություններ էին լինում մորս նկատմամբ, նաև՝ մեր նկատմամբ: … Ծնողներս գնացին ՔԿԱԳ, ամուսնալուծվեցին, տանը հայրս մորս ստիպեց տանից հեռանալ, գնալ ուրիշ տեղ ապրելու: Վիճաբանություն եղավ, մենք երեխաներով որոշեցինք, որ մամային մենակ չենք թողնի, հայրս բարկացավ, սկսեց ինձ քաշքշել, հայհոյել, ես չարձագանքեցի, քանի որ առաջին անգամ չէր, խմած ժանանակ ավելի կոպիտ է լինում մեզ հետ: Մորս ստիպեց տանից դուրս գալ, սկսեց հայհոյել: Մենք դուրս եկանք տանից, գնացինք իմ բարեկամի տուն…» - հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական տղամարդ:

ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ, որպես կանոն, ընտանեկան բռնությունների շարժառիթներն ու դրդապատճառները տարբերվում են, քանի որ, նախ, բռնարարը թիրախավորում է անձին՝ վերջինիս որոշակի պաշտպանված հատկանիշների պատճառով՝ սեռական կողմնորոշվածություն, գենդերային ինքնություն, գենդերային ինքնաարտահայտում, այնուհետև նրա նկատմամբ անհանդուրժողականության և ատելության դրսևորմամբ կատարում է բռնություն: Ուստի, կարելի է եզրակացնել, որ ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դրսևրումները կատարվում են նրանց հանդեպ ունեցած ատելությամբ, իրավագիտակցության ցածր մակարդակով, «հարևանների մոտ ամոթով չմնալու, գյուղում չխայտառակվելու» և մի շարք այլ սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված:

«Այնպես էր ստացվել, որ ընտանիքիս անդամները, մասնավորապես հայրս, եղբայրս, իմացել են, որ գեյ եմ, տեսել էին իմ հաղորդագրությունները տրանս անձանց հետ, նաև նկարներ, ինչպես հետո իմացա իրենց ուղարկել էին: Երբ մտա տուն, արդեն ինձ էին սպասում ընտանիքիս անդամները, հորեղբայրներս ու իրենց տղաները: Եղբայրս միանգամից երկաթով սկսեց ինձ ծեծել, մյուս կողմից հայրս եկավ, սկսեց բռունցքներով ինձ հարվածել, հորեղբայրներս ու իրենց տղաները հայհոյում էին ու հարվածում, որ ես իրենց ընտանիքի անունը գետնովն եմ տվել, անարգել եմ իմ վերաբերմունքով, իմ շրջապատով» - հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական տղամարդ:

Հայաստանի Հանրապետության քրեական նախկին օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսվում էր ընդհանուր այն կարգավորումը, որով քրեականացվում է մարդու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, էթնիկական ծագումից, տարիքից, սեռից, քաղաքական կամ այլ հայացքներից, և այլն: Գործնականում, սակայն, այդ հոդվածը հազվադեպ է կիրառվել:

Քրեական նախկին օրենսգրքի թերություններից մեկն այն էր, որ օրենսգրքում նախատեսվում էին ատելության շարժառիթների ընդամենը երեք հիմքեր՝ ազգայինը, էթնիկը և կրոնականը, մինչդեռ խտրականության արգելված հիմքերի և ատելության հիմքով կատարվող հանցագործությունների հնարավոր շարժառիթների շրջանակը շատ ավելի լայն է և ներառում է խտրականության համընդհանուր արգելքի հայեցակարգը: Օրենսդրական այս բացի պատճառով չեն բացահայտվում և անպատիժ են մնում ատելության շարժառիթներով կատարվող մի շարք հանցագործություններ, մասնավորապես՝ անձի սեռական կողնորոշվածությամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված:

ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանվել են ավելի լայն հիմքեր, որոնցով կարելի է խտրականության արգելքի խախտման մասին պնդում ներկայացնել քրեական օրենսդրության ներքո: Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) հանձնարարականներով[46] պայմանավորված՝ քրեական օրենսգրքում հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը համարվում է քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք[47]: «Այլ հանգամանքներով պայմանավորված ատելության» ձևակերպումը պետք է որ, ի թիվս այլնի, ներառի նաև ԼԳԲՏԻՔ+ համայնքին, քանի որ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը խորհուրդ էր տվել բարեփոխել քրեական օրենսգիրքը՝ արգելված հիմքերի ցանկում ներառելով սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը[48]:

Վերջին տարիներին հաճախակիացել են ԼԳԲՏԻՔ+ համայնքի նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը: Ընտանիքում հարգված, ընդունված չլինելու հետևանքով՝ երիտասարդները դիմում են ծայրահեղ քայլերի՝ մինչև ինքասպանության: Ցավով արձանագրենք, որ այդ դեպքերը չեն բացահայտվում և հանրայնացվում միայն նրա համար, որ ծնողները թաքցնում են իրավապահ մարմիններից իրական դրդապատճառները, չեն ցանկանում, որ հասարակությունն իմանա իրենց երեխաների սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքության մասին՝ իրենց ընտանիքներին չթիրախավորելու, իսկ իմանալու դեպքում էլ ամեն կերպ խեղաթյուրում են իրականությունը՝ հասարակության կողմից չվարկաբեկվելու համար:

Ասվածի վառ օրինակ է 2022թ-ի հոկտեմբերի 20-ին կատարված ինքնասպանության դեպքը, երբ կամրջից ցած նետվելով ինքնասպանություն էին գործել երկու երիտասարդ (նույնասեռական զույգ)՝ 16 և 21 տարեկան: Իրենց մահվանից կարճ ժամանակ առաջ նրանք իրենց հարաբերությունների մասին լուսանկարներ էին տեղադրել սոցիալական կայքերից մեկում: Լուսանկարներն արագ տարածվել էին՝ հիմնականում վիրավորական ու հոմոֆոբ մեկնաբանություններով: Անչափահաս տղայի մայրը նույնպես մեկնաբանություն էր թողել՝ գրելով **«... դու որպես անչափահաս լավ կլինի գնաս սատկես»[49]:**

[46] Տես՝ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի զեկույցը Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ շրջան), զեկույցն ընդունվել է 2016 թվականի հունիսի 28-ին:
[47] Տես՝ ՀՀ նոր քրեական օրենսգիրք, հոդված 71:
[48] Տես՝ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի զեկույցը Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ շրջան), զեկույցն ընդունվել է 2016 թվականի հունիսի 28-ին:
[49] Այս դեպքը մեծ ռեզոնանս ստացավ սոցիալական հարթակներում, մեդիայում, https://media.am/hy/critique/2022/12/27/34911/:

Այս ամենից կարելի է ենթադրել, որ անչափահաս տղան տանը ենթարկվել է բռնության, ընտանիքի կողմից ցուցաբերվել է դաժան վերաբերմունք: Հրապարակվել էր նաև տղայի և իր ընկերներից մեկի խոսակցության նկարները, որտեղ հստակ երևում է, որ տղան եղել է փակի տակ, իր մոտ չի ունեցել հետախոս:

Փաստ է, որ Հայաստանը ԼԳԲՏԻՔ+ անձանց համար ապահով երկիր չէ և նրանք պաշտպանված չեն ո՛չ հասարակության, ո՛չ պետության կողմից:

ԼԳԲՏԻՔ+ անձինք, որոնց սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը վառ արտահայտված չէ, կամ որոնք թաքցնում են իրենց սեռական կողմնորոշվածությունը կամ գենդերային ինքնությունը, առավել պաշտպանված են, քան այն անձինք, որոնք ունեն իրենց ՍԿԳԻ-ն ընդգծող որևէ հատկանիշ, տարր (սանրվածք, հագուստ, ընդգծված դիմահարդարում, շարժումներ):

> *«Մայրս կասկածում է իմ սեռական կողմնորոշման վրա, քանի որ ես արտաքնապես նուրբ եմ, ինձ հետևում եմ, փոքր ինչ երկար մազեր ունեմ, ինձ պարբերաբար նվաստացնում է իմ արտաքին տեսքի համար: Ինձ կարող է տանը փակել ու չթողել, որ ես գնամ աշխատանքի, ընկերներիս հետ շփվեմ» –*
> հատված հետազոտության հարցաթերթիկից,
> **նույնասեռական տղամարդ:**

Ուստի արտաքին տեսքը հիմք է հանդիսանում բռնարարի համար կատարելու ենթադրություններ տվյալ անձի սեռական կողնորոշվածության և գենդերային ինքնության վերաբերյալ: Շատ հաճախ արտաքին նշանները չթաքցնելը վտանգում է ինչպես իր, այլև իր զուգընկերոջ առողջությունը, կյանքը, ինչպես նաև առաջացնում է հոգեբանական ապրումներ:

> *«Քանի որ ես լեսբի եմ, իմ արտաքինը փոքր ինչ տարբերվող է, մազերս ես պարբերաբար տարբեր գույների եմ ներկում: Դա դուր չի գալիս իմ ընտանիքին, ու ամեն անգամ նման փոփոխությունների ժամանակ ծնողներս սկսում են ինձ վիրավորել, նվաստացնել, վիրավորական ու արժանապատվությունս ոտնահարող բառերով ինձ դիմել: Եղել են դեպքեր, երբ պատասխանել եմ, փորձել եմ պաշտպանվել, ինձ ապտակել են: Եղել է, որ չեն թողել շփվեմ ընկերներիս հետ» -*
> *հատված հետազոտության հարցաթերթիկից,*
> **նույնասեռական կին:**

Հետազոտության մասնակիցներն այն հարցին, թե որն է եղել դեպքի/հարձակման դրդապատճառը, և արդյոք կարծում են, որ հարձակումը կամ դեպքը առնչություն ունի իրենց (իրական կամ ենթադրյալ) գենդերային ինքնության, ինքնարտահայտման կամ սեռական կողմորոշվածության հետ, պատասխանել են հետևյալ կերպ (տե՛ս Գծապատկեր 2.), ընդ որում, հնարավորություն են ունեցել տալ մեկից ավելի պատասխաններ:

Գծապատկեր 2. Բռնության դրդապատճառը. Արդյո՞ք կարծում եք, որ դեպքը առնչություն ունի անձի (իրական կամ ենթադրյալ) գենդերային ինքնության, գենդերային ինքնարտահայտման կամ սեռական կողմնորոշվածության հետ:



Ընտանեկան բռնությունը մեկանգամյա, պահի տակ հավասարակշռությունից դուրս գալու իրավիճակ չէ, պատահական ապտակ չէ: Ընտանեկան բռնությունը բռնարարի վարքի կրկնվող մոդել է, որը առաջ է բերում ծանր հետևանքներ: Անկախ դրա եզակի լինելու կամ կրկնվելու հանգամանքից՝ նկարագրված բռնությունները ընտանեկան բռնություն են համարվում:

Հոգեբանական կամ տնտեսական բռնությունները սովորաբար մշտական բնույթ են կրում, որի նպատակն է բռնության ենթարկվածին նսեմացնել, ոչնչացնել նրա ինքնագնահատականն ու ինքնավստահությունը, բարձրացնել նրա նկատմամբ վերահսկողությունը:

> *«Ծնողներս տանը պարբերաբար վիրավորական, պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող բառերով, արտահայտություններով են ինձ դիմում, վիրավորում են անգամ բողոքի ներկայությամբ: Հաճախ են շեշտում իմ գեր լինելու հանգամանքը: Ասում են, որ ես «տանը կմնամ, ինձ ուզող չի լինի, ես գեշ եմ…»»* – հատված հետազոտության հարցաթերթիկից,
> **երկսեռական կին:**

Մեկ անգամ ևս փաստենք, որ Հայաստանում չկա ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրական համապարփակ և տեսակավորված տվյալների հավաքագրման կենտրոնացված մեխանիզմ: Ընտանեկան բռնությունների դեպքերով զբաղվող իրավասու բոլոր մարմիններում ընտանեկան բռնությունների դեպքերով հաշվառումները կատարվում են առանց առանձին տողով նշելու զոհի սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը, ինչի հետևանքով էլ չի ձևավորվում վերը նշված վիճակագրությունը:

2.3 Ընտանեկան բռնության դրսևորումները

1993թ-ին ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը՝ որպես մարդու իրավունքների միջազգային գործիք, տալիս է բռնության սահմանումը որպես՝ «Գենդերային բռնության ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կամ, հավանաբար, կհանգեցնի անհատի ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասվածքների կամ տառապանքների: Ընտանեկան բռնության տեսակներն են նաև սպառնալիքները, խոշտանգումները կամ կամայական ազատազրկումը, որը տեղի է ունենում անձնական կամ հասարակական տիրույթում»:

Սույն հետազոտության շրջանակներում, հիմք ընդունելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կարգավորումները և սահմանումները, անդրադարձ է կատարվել ընտանեկան բռնության հետևյալ տեսակներին՝

- *ֆիզիկական բռնություն,*
- *սեռական բռնություն,*
- *տնտեսական բռնություն,*
- *հոգեբանական բռնություն,*
- *անտեսում*[50]*:*

Բռնության տեսակների նկարագրությունները տրված են Օրենքում: Սույն Հետազոտությունում ներկայացված ընտանեկան բռնություն համարվող գործողությունները կամ անգործությունը ուսումնասիրվել է ավելի կոնկրետ արարքների տեսքով, որոնք Օրենքի իմաստով՝ համընկնում են ընտանեկան բռնության որևէ տեսակի հետ: Ընտանեկան բռնության իրավախախտումները սույն հետազոտության շրջանակներում բաժանվել են երկու խմբի՝

Խումբ 1. *Գործողություններ, որոնք ՀՀ քրեական օրենսգրքով դասակարգվում են որպես «հանցագործություն»,*

Խումբ 2. *Իրավախախտումներ, որոնք չեն որակվում որպես հանցագործություն, սակայն Օրենքի տեսանկյունից հանդիսանում են ընտանեկան բռնության տեսակ:*

Իրավախախտումների տեսակները կարող են տեղի ունենալ մի շարք վայրերում՝ ինչպես զոհի տանը, բռնարարի տանը կամ տարատեսակ հաստատություններում (բուժհաստատություն, ոստիկանություն, աշխատավայր), այնպես էլ հանրային վայրերում:

Այս «**Խումբ 1»-ի** հանցագործությունների մեջ են մտնում՝ ֆիզիկական և սեռական բռնությունը, իսկ «**Խումբ 2»-ին են վերաբերում՝** տնտեսական բռնությունը, հոգեբանական բռնությունը և անտեսումը:

Որոշելու համար՝ արդյո՞ք տվյալ ընտանեկան բռնությունը կատարվել է անձի իրական կամ ենթադրյալ գենդերային ինքնության, գենդերային ինքնարտահայտման կամ սեռական կողմնորոշվածության հիմքով, կազմակերպության կողմից, հիմք ընդունելով Օրենքը, մշակվել են հարցադրումներ, որոնք ներառված են ստանդարտացված հարցաթերթի մեջ: Այդ հարցերը հետազոտողին հնարավորություն են տվել առանձնացնելու գենդերային ինքնությամբ և ինքնարտահայտմամբ, ինչպես նաև սեռական կողմնորոշվածությամբ պայմանավորված ընտանեկան բռնության դեպքերը:

[50] Ընտանեկան բռնությունների տեսակների մեկնաբանությունները տրված են սույն Զեկույցի «Հիմնական հասկացությունները և դրանց բացատրությունները» բաժնում:

«Սեռական կողմնորոշմանս մասին տեղեկանալուց հետո՝ ընտանիքիս անդամները փակի տակ ինձ պահեցին: Իհարկե մեծ վիճաբանություն եղավ, վիրավորանք, ծեծ, կռիվ: Ինձ արգելեցին շփվել որևէ մեկի հետ, կապը կտրեցին արտաքին աշխարհի հետ: Ես դիմեցի փախուստի, կարողացա փախնել տանից ու ապաստանել ընկերներից մեկի տանը…» – հատված հետազոտության հարցաթերթիկից, **նույնասեռական կին:**

Թեև զոհի կողմից դեպքի նկարագրությունն ու որակումը չափազանց կարևոր է հետազոտության համար, պետք է հաշվի առնել, որ զոհը միշտ չէ, որ կարող է հասկանալ՝ տվյալ բռնության դեպքն արդյոք ունե՞ր դրդապատճառներ իր սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով, թե՝ ոչ:

«Պարբերաբար հորս կողմից ծեծվել եմ, ապտակներ եմ ստացել: Այդ ամենը հորս կողմից եղել է առանց պատճառների: Վերջին ժամանակներում, երբ սկսեցի իրենից հեռու ապրել (ինքը Վրաստանում է ապրում, ես՝ Երևանում), մեր հարաբերությունները սառել են, չենք վիճաբանում: Թեև հայրս ինձ միշտ ցավացրել է, բայց աջակցում է ինձ իմ ուսման հարցում, ֆինանսապես օգնում է: Հորս կոպտության պատճառները չեմ հասկացել» - հատված հետազոտության հարցաթերթիկից, **երկսեռական կին:**

ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դրսևորումները դիտարկվել են բռնության առավել մեղմ տեսակից (օրինակ՝ ապտակ) մինչև դանակի կամ հրազենի սպառնալիք և/կամ օգտագործում: Ընդ որում, պետք է արձանագրենք, որ որքան սաստկանում են **բռնության դրսևորումները, այնքան նվազում է դրանց ենթարկված անձանց թիվը:**

Հետազոտության մասնակիցները ընտանեկան բռնության դեպքերը բնութագրել են հետևյալ կերպ (տե՛ս Աղյուսակ 8.), ընդ որում, եթե դեպքը եղել է զուգորդված բռնության մի քանի ձևերով, ապա նշել են մի քանի դրսևորումները միաժամանակ:

Աղյուսակ 8. Ընտանեկան բռնության հետևյալ տեսակները, որը / որոնք կիրառվել են Զոհի նկատմամբ

Կիրառված բռնության տեսակները	Դեպքերի քանակը	Ընդամենը (%)
▸ *Ֆիզիկական*	41	67,2
▸ *Սեռական*	3	4,9
▸ *Տնտեսական*	19	31,1
▸ *Հոգեբանական*	54	88,5
▸ *Անտեսում*	4	6,6

Հետազոտությունում ֆիզիկական բռնություն են դիտարկվել զուգընկերոջ կամ ընտանիքի այլ անդամի կողմից զոհի նկատմամբ իրականացված վարքային հետևյալ դրսևորումները. ապտակելը, որևէ առարկա նետելը, որը կարող է վնասել, հրելը, հարվածելը, մազեր քաշելը, բռունցքով կամ որևէ այլ առարկայով հարվածելը, ոտքով հարվածելը, քարշ տալը կամ ծեծը, դիտավորյալ խեղդելը կամ այրվածք հասցնելը, սպառնալը կամ հրացան, դանակ կամ որևէ այլ զենք օգտագործելը, և այլն, ինչպես նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը:

Հետազոտության մասնակիցներից 41-ը (67,2%) ենթարկվել են ֆիզիկական բռնության, ընդ որում, այն կրել է ինչպես մեկանգամյան, այնպես էլ՝ պարբերական բնույթ: Ամենից հաճախ հանդիպող ֆիզիկական բռնության դրսևորումը ապտակն է, ծեծը կամ որևէ առարկա նետելը, որը կարող էր վնասել Զոհին: Ֆիզիկական բռնությունն արտահայտվել է մի քանի ձևերով, զուգորդվել է նաև բռնության այլ տեսակներով **(տե՛ս Աղյուսակ 9.):**

Աղյուսակ 9. Ֆիզիկական բռնության դրսևորումները

Ֆիզիկական բռնության ձևեր	Դեպքերի քանակը	Ընդամենը (%)
▸ Ապտակել է և/ կամ հարվածել է բռունցքով	27	44
▸ Քաշել է մազերը, քարշ է տվել մազերից	6	9,9
▸ Հարվածել է ոտքերով և/կամ ձեռքերով	13	21,3
▸ Փորձել է խեղդել կամ մարմնի որևէ հատված այրել	5	8,2
▸ Որևէ առարկա է նետել վրան, որը կարող էր վնասել	11	18
▸ Սպառնացել է կամ իրականում օգտագործել է հրացան, դանակ կամ որևէ այլ զենք/հարմարեցված առարկա	16	26,2
▸ Ապօրինի զրկել է ազատությունից	7	11,5
▸ Այլ	2	3,3

> *«Մորս կողմից բռնություն է եղել իմ նկատմամբ. ծեծ, ապտակ, նվաստացում, արժանապատվության ոտնահարում: Սա պարբերական բնույթ է կրում: Ցավոք, հայրս էլ է անտարբեր, անգամ չի փորձում ինձ օգնել, այլ մորս է պաշտպանում ամեն նմանատիպ սցենարների ժամանակ…»* - հատված հետազոտության հարցաթերթիկից,
> **երկսեռական կին:**

Հետազոտության արդյունքներից պարզ է դառնում, որ ֆիզիկական բռնությունն ունի տարբեր դրսևորումներ, ամենաթեթև տարբերակից՝ մազ քաշել, հրել, մինչև ամենից սուր՝ խեղդել, դանակի սպառնալիք կամ օգտագործում, և այլն:

Ֆիզիկական բռնության հիմնականում ենթարկվում են անչափահաս ԼԳԲՏԻՔ+ երեխաները՝ իրենց ծնողների կողմից: Որքան զոհը ձեռք է բերում ինքնուրույնություն, այնքան ֆիզիկական նման դրսևորումները նվազում են:

«Ինձ միշտ զրկում են զարգանալու հնարավորություններից, ես օրերով ինձ անտեսված եմ զգում և արհամարված, երբեք գումար չեմ խնդրում, քանի որ դա լարվածություն է առաջացնում, չեն տալիս, չեն օգնում: Երբ փորձում եմ ինքս կայանալ, մասնակցել միջազգային հանդիպումների, ինձ տանը միշտ ճնշում են և ստորացնում» - հատված հետազոտության հարցաթերթիկից,
երկսեռական կին:

Սեռական բռնությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն են:

Հետազոտության ընթացքում սեռական բռնության դրսևորումները դիտարկվել են 3 հիմնական տեսանկյուններից՝ 1) երբ սեռական բռնությունն իրականացվել է սպառնալիքով կամ ուժով, 2) երբ Զոհին ստիպել են սեռական հարաբերություն ունենալ այն ժամանակ, երբ վերջինս չի ցանկացել, սակայն վախով պայմանավորված՝ համաձայնվել է, 3) երբ զոհին ստիպել են սեռական բնույթի որևէ բան անել, որը վերջինիս համար անընդունելի է եղել:

Սեռական բռնության ենթարկված անձինք ավելի շատ գերադասում են չխոսել այդ մասին: Հարցազրույցների ընթացքում նկատվում էր, որ թեև մասնակիցները տեղեկացվում էին իրենց նույնականացման տվյալների պաշտպանության մասին, շատերը խուսափում էին և չէին ուզում բարձրաձայնել դրա մասին՝ վախով, ամոթով, բռնարարի կողմից վրեժխնդրությամբ պայմանավորված:

Հետազոտության մասնակիցներից միայն 3-ն են պատասխանել (4,9%), որ ենթարկվել են սեռական բռնության **(տե՛ս Աղյուսակ 10.):**

Աղյուսակ 10. Սեռական բռնության դրսևորումները

Սեռական բռնության ձևեր	Ընդամենը, դեպք (3)	Ընդամենը (4.9%)
▸ Սպառնալով կամ ուժով պահելով, ստիպել է սեռական հարաբերություն ունենալ այն ժամանակ, երբ չեք ցանկացել	0	0
▸ Ստիպել է սեռական հարաբերություն ունենալ այն ժամանակ, երբ չեք ցանկացել, սակայն վախով պայմանավորված՝ համաձայնվել եք	1	1.6
▸ Ստիպել է սեռական բնույթի որևէ բան անել, որը Ձեր համար անընդունելի է եղել	2	3.3
▸ Այլ	0	0

«..Սեքսի ընթացքում շատ կոպիտ էր, ես խնդրեցի նորմալ դրսևորել, ավելի զուսպ լինել, բայց շարունակեց նույն կերպ: Ես ստիպված ասեցի, որ ավելի լավ է հեռանաս, քան ինձ նվաստացնես այսպես: Ասեց՝ մինչև չբավարարվեմ, չեմ հագնվի ու գնա: Ես չէի ուզում այդ կերպ իր հետ սեռական հարաբերություն ունենալ, բայց համաձայնվեցի միայն նրա համար, որ իրենից շուտ ազատվեմ, թողնի հեռանա իմ տանից: Սակայն դրանից հետո էլ որոշեց չգնալ, անգամ զանգեց իր ընկերոջը, որ ինքն էլ գա, ասեց՝ ստեղ բան կա, իրականում չհասկացա դա ինչին կամ ում էր վերաբերում, կամ ինչ էր ուզում դրանով ասեր: Երբ հասկացա, որ մարդ է իմ տուն կանչում, բղավեցի, որ մյուս սենյակից ընկերուհիս գա: Ես ու ընկերուհիս համոզում էինք, որ ինքը հագնվի ու գնա: Մի կերպ համաձայնվեց, որ կգնա իմ տանից, և դռան մոտ քաշքշուկ սարքեց, ընկերուհուս հարվածեց: Մի կերպ ընկերուհուս հետ իրեն հրեցինք դուրս և փակեցինք դուռն իր վրա: Դռան ներսի կողմից լսում էինք, թե ոնց է հարվածում դռանը, հավանաբար ոտքերով էին հարվածները, որովհետև շատ ուժեղ էր ձայնը: Որոշ ժամանակ անց, երբ հասկացանք, որ հեռացել է արդեն դռան մոտից, դուռը բացեցինք ու տեսանք որ դրսի դռան ներքևի մասը կոտրել էր» – հատված հետազոտության հարցաթերթիկից,
տրանսգենդեր կին:

Կախված զուգընկերոջ կողմից կիրառվող բռնության տեսակից և վերաբերմունքից՝ այն կարող է Զոհի մոտ առաջացնել տարբեր զգացողություններ՝ հիասթափությունից մինչև վախ սեփական կյանքի հանդեպ: Սեռական բռնությունը զուգորդվել է (100%) հոգեբանական բռնությամբ:

«Գնացի հանդիպման, իր մեքենայով գնացինք մոլթ տարածք, կողքը գերեզմանոց կար: Չէի ուզում երկար մնալ տարածքում, վախենալու էր: Պահանջեց սեռական հարաբերություն ունենալ առանց պահպանակի, ինչն ինձ համար անընդունելի էր: Ես մերժեցի, սկսեց ոտքերով ինձ հարվածել, մազերիցս քաշել: Ստիպված համաձայնվեցի: Ավարտելուց հետո ստիպեց երկրորդ անգամ նույն կերպ հարաբերություն ունենամ, իսկ ես չէի ուզում, տհաճ էր: Դայուսակս վերցեց, ասեց, որ եթե չանեմ չի տա: Ես սկսեցի ինձ նենց պահել, որ վատ եմ, շունչս է կտրվում, դեղերս են պետք պայուսակից, որ պայուսակս տա ու արցունքաբեր գազը հանեմ: Բայց պայուսակս չտվեց: … Մոտիս ամբողջ գումարը վերցրեց, կոմֆետիկ իրերս, հեռախոսիցս ջնջեց իր տվյալները, ինձ էլ մեքենայից գցեց դուրս, հեռախոսն էլ շպրտեց, ու սպառնաց, որ եթե ոստիկանություն դիմեմ, իմ հետևից մարդ կուղարկի, ինձ կօգտագործեն ու կդանակահարեն…» – հատված հետազոտության հարցաթերթիկից,
սեքս աշխատող տրանսգենդեր կին:

Հետազոտությունում՝ որպես տնտեսական բռնություններ են դիտարկվել հետևյալ դրսևորումները. անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

«Մորս կողմից պարբերաբար բռնության եմ ենթարկվում, ինչ անեմ, մայրս բողոքում է, անընդհատ նկատողություն է անում: Ասում է, որ տղայի նման չեմ, գալուբոյ եմ, իրենց նման եմ քայլում, վատ եմ հագնվում՝ տղային ոչ պատշաճ: Եղել են դեպքեր, որ հեռախոսով չի թողել խոսեմ ընկերներիս հետ, արգելել է շփվել նրանց հետ, անգամ հեռախոս չի տվել մի որոշ ժամանակ: Անընդհատ հետապնդում է ինձ՝ ուր գնացի, ում հետ եմ, ինչ եմ անում: Հայրս նույնպես ագրեսիվ է, բռնանում է, բայց իր հետ քիչ եմ շփվում» – հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական տղամարդ:

Հետազոտության մասնակիցներից 19-ը (31,1%) ենթարկվել են տնտեսական բռնության **(տե՛ս Աղյուսակ 11.)**:

Աղյուսակ 11. Տնտեսական բռնության դրսևորումները

Տնտեսական բռնության ձևեր	Ընդամենը, դեպք (19)	Ընդամենը (%)
▸ Նյութական կախվածություն է ստեղծել իրենից և/կամ իշխելու նպատակով՝ զրկել է սննդից, հագուստից, կացարանից, դեղորայքից, և այլն	6	9,9
▸ Ոչ իրավաչափ սահմանափակել է տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ բնակարանը, ավտոմեքենան կամ այլ գույքը	10	16,4
▸ Արգելում է կրթություն ստանալ/սահմանափակում է կրթություն ստանալու իրավունքը	8	13,1
▸ Արգելում է աշխատանքի անցնել և ինքնուրույն եկամուտ ունենալ	5	8,2
▸ Այլ	3	4,9

«Այնպես ստացվեց, որ մանկությանս ընկերուհու հետ վիճաբանեցինք: Դրանից հետո ինքն իմ մորը, հետո՝ հորս, ընկերներիս սկսեց պատմել, որ ես լեսբի եմ: Մայրս շատ ծանր տարավ այդ հանգամանքը, հայրս սկսեց ինձ սպառնալ, արգելեց ինձ շփվել իմ ընկերների հետ: Ծնողներս սկսեցին սահմանափակել իմ շփումն ընկերներիս հետ, սկսեցին ժամով տանից դուրս թողնել, անգամ դպրոցում կազմակերպվող միջոցառումներին չէին թողնում գնայի…» – հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական կին:

Շատ տարբեր են հոգեբանական բռնության վերաբերյալ ընկալումները և մոտեցումները զոհերի մոտ: Հոգեբանական բռնությամբ է զուգորդվում գրեթե յուրաքանչյուր ընտանեկան բռնություն:

«Ես փոքր ժամանակից ինձ տղա եմ զգացել, ինձ դուր չի եկել, որ ես աղջիկ եմ: Դա ինձ միշտ անհարմարություն է առաջացրել դպրոցում, ընտանիքում, հիմա էլ բուհում: Դրա համար պարբերաբար ծնողներիս կողմից արժանացել եմ վիրավորանքի, ծեծի, ստորացման, ամենավատ բառերով էին դիմել ու դիմում ինձ: Մազերս կարճ կտրելու համար էլ են ծեծել ինձ» –
հատված հետազոտության հարցաթերթիկից,
տրանսգենդեր տղամարդ:

Հոգեբանական բռնություն է համարվում դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերաբար նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

«Ես տրանսգենդեր եմ, Ամանորից առաջ այցելեցի ծնողներիս: Այնպես ստացվեց, որ չկարողացա այդ պահին թաքցնել ու ծնողներս իմացան իմ սեռական կողմնորոշման մասին: Վիճաբանություն սկսվեց, ինձ արգելեցին հետ գալ Երևան, փակեցին ինձ տանը, վերցրեցին իմ հեռախոսը: Մի օր հետո մի կերպ վերցրել եմ հեռախոսս, զանգել եմ ընկերներիս, որ գան հետևիցս: Ես ոստիկանություն չդիմեցի, քանի որ ծնողներիս հետ չէի ուզում կոնֆլիկտ ունենալ, բայց ընկերներս եկան հետևիցս, ես մի կերպ կարողացա տանից դուրս գալ» – հատված հետազոտության հարցաթերթիկից, **տրանսգենդեր կին:**

Հետազոտության մասնակիցներից 54-ը (88,5%) ենթարկվել է հոգեբանական բռնության **(տե՛ս Աղյուսակ 12.):**

Աղյուսակ 12. Հոգեբանական բռնության դրսևորումները

Հոգեբանական բռնության ձևեր	Ընդամենը, դեպք (54)	Ընդամենը (%)
▸ Դիտավորությամբ պատճառվել է հոգեկան ուժեղ տառապանք (այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը)	29	47,6
▸ Արժանապատվության պարբերական նվաստացում կամ ստորացում՝ այլ մարդկանց ներկայությամբ	24	39,4
▸ Հղիության արհեստական ընդհատման հարկադրանք	0	
▸ Արգելել է հանդիպել ընկերներին/ընկերուհիներին և/կամ սիրած էակին	27	44
▸ Պարբերաբար վերահսկում է Ձեր տեղաշարժը ու շփումը, ստիպում է իրեն տեղյակ պահեք դրա մասին, վերահսկում է Ձեր հեռախոսազանգերն ու անձնական հաղորդագրությունները	17	27,9
▸ Այլ	5	8,2

2022թ-ի դեկտեմբերին մայրիկս գիշերը մատնահետքովս բացել է հեռախոսս, տեսել է իմ նկարները, որտեղ երևում է, որ ընկերոջս հետ եմ գրկախառնված նստած: Գիշերը արթնացրեց ժամը 03-ին ու սկսեց հետս վիճել թե՝ սա ո՞վ է: Հետո հեռախոսս տարավ, զանգերի ցուցակը վերցրեց, թե ում հետ եմ շփվել: Ուսմանս տեղն ասեց, որ մի քանի ամիս չեմ գնալու դասի: Ինձ դեկտեմբերից մինչև մարտ ամիս պահել են փակի տակ, որ ոչ մեկի հետ չշփվեմ: Այդ ամբողջ ընթացքում սենդիս մեջ արյուն էր լցնում, տարօրինակ բաներ անում (եհովայի վկա է), ես չէի ուտում: Երեք քույրերս և եղբայրս դադարեցին հետս շփվել, թեև Հայաստանում չեն ապրում, չէին ընդունում, որ ես գեյ եմ: Մայրս ստիպում էր Եհովայի վկաների հավաքների մասնակցեմ, տանը գուշակներ էր բերում, որ ինձ փոխի: … Եղել են քաշքշուկներ, իրերս են վառել, դասի գնալուց պատուհանից բաներ է գոռում մայրս, որ հետս ոչ ոք չշփվի: Հետս մինչև հիմա նվաստացնելով է խոսում, ուզում է ամեն ինչ անի, որ իրենից կախվածություն ունենամ: Փորձեր արեց բանկային քարտերս պահել, անձնագրերս վերցնել ու վառել, որ տեղ չգնամ: Տեղ գնալուց միշտ զանգել եմ ու տեղեկացրել, թե ուր եմ գնում, նկար ուղարկել եմ, թե որտեղ եմ այդ պահին գտնվում» -
հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական տղամարդ:

Անտեսում է համարվում ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Հետազոտության մասնակիցներից 4-ը (6,6%) ենթարկվել է անտեսման **(տե՛ս Աղյուսակ 13.):**

Աղյուսակ 13. Անտեսում

Անտեսման դրսևորումները	Ընդամենը, դեպք (4)	Ընդամենը (%)
▸ Ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), դիտավորությամբ չբավարարելը	4	6,6
▸ Չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը	0	0
▸ Այլ	0	0

«Հայրս, երբ իմացավ աշխատում եմ, սկսեց անընդհատ գումար ուզել, ես էլ սկսեցի պարբերաբար գումար տալ, որ վիճաբանություններ չլինեն: Մի անգամ մոտս գումար չկար, չէի կարող գնալ աշխատանքի, հորիցս փող ուզեցի՝ ընդհամենը 5000 ՀՀ դրամ, հայրս մերժեց, չտվեց: Սկսեցի զանգել հորական իմ բարեկամներին, որպեսզի գումար տան, բայց բոլորից մերժում ստացա: Այդ ժամանակ հայրս զանգեց իր բարեկամներից մեկին ու 5000 դրամ խնդրեց, բնական է, իրեն չմերժեցին: Այդ ժամանակ ինձ ասեց, որ բոլորն ինձ մերժել են, որովհետև ես եմ վատը և ոչ ոք ինձ չի սիրում» -
հատված հետազոտության հարցաթերթիկից,
նույնասեռական կին:

Հետազոտության մասնակիցները 37 (63,9%) դեպքերով նշել են, որ բռնության ժամանակ բռնարարը եղել է մենակ, իսկ մնացած 24 դեպքերում՝ բռնարարները եղել են 2 և ավելի անձինք (33,1%):

61 բռնության դեպքերից 31 դեպքով եղել են ականատեսներ, որից 10 դեպքով եղել է մեկ ականտես, իսկ 21 դեպքի ժամանակ ականատեսները եղել են 2 և ավելի անձինք: Ականատեսների վերաբերմունքը եղել է շատ տարբեր՝ կարեկցականից մինչև անտարբեր: 31 դեպքերից 14 դեպքերի ժամանակ ականատեսները եղել են անտարբեր, 6 դեպքով՝ չեն միջամտել, մնացած 11 դեպքերում՝ օգնել են զոհին: Եղել են տուժողներ, որոնք դիմել են ինքնապաշտպանության **(տե՛ս Գրապատկեր 3.):**

Գծապատկեր 3.



Բռնության ընթացքում 15 դեպքերում զոհի նկատմամբ բռնարարը **կիրառել է և/կամ սպառնացել է օգտագործել/կիրառել զենք, հրազեն, գործիք, առարկա (տե՛ս Գրապատկեր 4.):**

Գծապատկեր 4. Բռնության ընթացքում բռնարարը Ձեր նկատմամբ կիրառե՞լ է և/կամ սպառնացե՞լ է օգտագործել/կիրառել զենք, հրազեն, գործիք, առարկա:



Բռնության ժամանակ տուժողները հիմնականում ունենում են տեսանելի մարմնական վնասվածքներ **(տե՛ս Գծապատկեր 5.):** Առավել հաճախ չեն դիմում բժշկական օգնության, քանի որ չեն ցանկանում, որ այլ անձինք իմանան դրա մասին, թաքցնում են ընկերներից, ենթադրում են, որ բավարար օգնություն չեն ստանա, եթե բուժհաստատությունում իմանան իրենց սեռական կողմնորոշվածության կամ գենդերային ինքնության մասին, ինչպես նաև խուսափում են իրավապահ մարմինների հետ շփումից՝ նրանց նկատմամբ վստահության պակասից ելնելով: Հարցվածներից միայն 3 անձ է դիմել բժշկական օգնության և ստացել պատշաճ բուժօգնություն:



Բռնության ենթարկվածներից 35-ը (57,4%) բնակվում են բռնարարի հետ համատեղ, իսկ 26-ը (42,6%)՝ առանձին: Բռնությունից հետո 13 (21,3%) անձ հեռացել է տանից՝ իր ընկերոջ կամ այլ անձի տուն, կամ՝ տեղափոխվել է վարձով բնակության: Հարցվածներից 34-ը (55,8%) պատասխանել են, որ եթե հնարավորություն ունենային, ապա միանշանակ կհեռանային տանից և առանձին կապրեին:

Զոհի իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ առավել խնդրահարույց է անչափահաս անձանց նկատմամբ ընտանեկան բռնությունը, երբ բռնարարը տուժողի ծնողն է, օրինական ներկայացուցիչը, և վերջինս ստիպված է շարունակել բնակվել բռնարարի հետ:

Հետազոտության մասնակիցների պատասխաններից արձանագրենք, որ հետազոտված դեպքերից միայն 4-ով են տուժողները դիմել ոստիկանություն, որից 2 դեպքով բռնարարի նկատմամբ կիրառվել է նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում և պաշտպանական որոշում, 1 դեպքով էլ հարուցել է քրեական գործ, սակայն ոչ ընտանեկան բռնության հիմքով: 1 գործով ոստիկանությունը դեպքի մասին հաղորդել է դատարանին, ում վարույթում քննվել է գործը, որից հետո դատարանը բռնարարի նկատմամբ կիրառված տնային կալանքը փոխարինել է կալանքով **(տե՛ս Գծապատկեր 6.):**

Գծապատկեր 6. Ի՞նչ քայլեր եք ձեռնարկել ընտանիքում բռնության ենթարկվելուց հետո

Գծապատկեր 6.



Ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏԻՔ+ անձինք գրեթե չեն դիմում իրավապահ մարմիններին այն հանգամանքով պայմանավորված, որ ոստիկանության բաժանմունքներում վերջիններս ոչ պատշաճ վերաբերմունքի են արժանանում, ոստիկանները ծաղրում և խտրականացնում են և թույլ չեն տալիս իրացնելու իրենց իրավունքները: Այս տեսանկյունից պետք է նշել, որ Կազմակերպությունը նախկինում մի քանի դեպքերով դիմումներ է հասցեագրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, որոնք վերաբերում են ոստիկանությունում ԼԳԲՏԻՔ+ անձանց իրավունքների ոտնահարմանը:

Ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏԻՔ+ անձինք չեն դիմում իրավապահ մարմիններին նաև այն պատճառաբանությամբ, որ չեն վստահում նրանց, այդ մարմիններն արդյունավետ չեն աշխատում, ունեն ենթադրություններ, որ ոստիկանության աշխատակիցներն իրենց գործերը կքննեն ոչ օբյեկտիվ, ունեն մտավախություն, որ իրենց մասին տվյալները կարող են հրապարակվել վերջիններիս կողմից, կբացահայտվի իրենց անձը, հնարավոր է հանցավորը վրեժխնդիր լինի, և այլն: Հետևաբար ԼԳԲՏԻՔ+ անձինք հանցագործության զոհի կարգավիճակում լինելիս նախընտրում են դիմել իրենց խնդիրներով և իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների, կամ պատմել, կիսվել ընկերների հետ:

Հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել բավականին զգայուն թեմաների, ինչպիսիք են, հատկապես, սեռական բռնությունները և դաժան ֆիզիկական բռնությունները, որոնց ԼԳԲՏԻՔ+ անձինք ենթարկվել են հարազատ մարդկանց կողմից: Վերապրել այդ ամենն ու խոսել այդ թեմաների շուրջ՝ դժվար է, դժվար էր 16-ից 18 տարեկան անձանց համար, որոնք առաջին անգամ էին բարձրաձայնում իրենց հետ պատահածի մասին: Հաշվի առնելով հետազոտվող թեմայի զերզգայունությունն ու բարդությունը՝ հարցազրույցի ավարտին հարցազրուցավարները փորձել են հասկանալ, թե ինչ զգացողություններ ունեն զոհերը՝ խոսելով բռնությունների մասին, և կարող ենք փաստել, որ հարցազրույցը հոգեբանորեն չի վնասել հետազոտության մասնակիցներին, իսկ ցանկացողներին ուղղորդվել է ստանալու հոգեբանական աջակցություն:

2.4 ՀՀ-ում գործող իրավապաշտպան կազմակերպությունների կողմից ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ արձանագրված ընտանեկան բռնությունների դեպքերի վիճակագրությունը

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն հարցումներ է ուղարկել Հայաստանում գործունեություն իրականացնող մի շարք իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների և կենտրոնների, որոնք զբաղվում են կանանց, երեխաների, ԼԳԲՏԻՔ+ անձանց իրավունքների պաշտպանությամբ, պարզելու համար, թե նշված կառույցներին 2021 թվականից 2023թ-ի օգոստոս ամիսը ներառյալ քանի՞ ԼԳԲՏԻՔ+ անձինք են դիմել՝ ընտանեկան բռնության ենթարկվելու պատճառով:

Հաշվի առնելով նման կառույցների գործունեության հասցեների բացահայտված չլինելու հանգամանքը՝ Կազմակերպությունը հարցումներն ուղարկել է հիմնականում էլեկտրոնային փոստի միջոցով, որոշ նամակներ՝ փոստային առաքման միջոցով և առձեռն: Էլեկտրոնային հասցեները հավաքագրվել են կազմակերպությունների սոցիալական հարթակներից և պաշտոնական կայք էջերից:

Ընդհանուր առմամբ ուղարկվել են 43 նամակ-հարցումներ[51], որոնցից միայն 11 կազմակերպություններից ենք ստացել արձագանք:

Կազմակերպությունների կողմից ներկայացվել է հետևյալ վիճակագրությունը.

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից, «Թալին Հույս» ՀԿ-ից ստացել ենք պատասխաններ, համաձայն որոնց՝ ընտանեկան բռնության հարցերով իրավական օգնություն ստանալու համար իրենց կառույցիներին ԼԳԲՏԻՔ+ անձինք չեն դիմել:

«Մարդու իրավունքների տուն Երևան» ՀԿ-ից, «Կանաչ Հայաստան» ՀԿ-ից, «ՕքսԵՁեն» հիմնադրամից, «Քվիր քուր» ՀԿ-ից հայտնեցին, որ նման տեղեկատվության չեն տիրապետում և չեն հավաքագրում:

«Կանանց ռեսուրսային կենտրոնից» հայտնեցին, որ իրենց կազմակերպությունը ընտանեկան բռնության խորհրդատվություն և ծառայություններ չի մատուցում, ուստի թվեր չեն կարող տրամադրել, իսկ ընտանեկան բռնության խնդիրներով դիմելու դեպքում՝ ուղղորդում են այն կազմակերպություններ, որոնք զբաղվում են ընտանեկան բռնության կանխարգելման հարցերով:

«Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ-ից ստացել ենք պատասխան, որ 2021թ-ից մինչ օրս կազմակերպությանը դիմած ընտանեկան բռնության ենթարկված անձանցից որևէ մեկը չի ներկայացել ԼԳԲՏԻՔ+ անձ:

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն մեզ ուղարկել է իրենց տարեկան զեկույցները, որոնցում ներառված են նաև ընտանեկան բռնության դեպքերը: Համաձայն այդ զեկույցների՝ 2021թ-ի ընթացքում կազմակերպության կողմից արձանագրվել է ընտանիքում բռնության 17 դեպք[52], 2022թ-ի ընթացքում՝ 6 դեպք[53], 2023թ-ի առաջին կիսամյակում՝ 5 դեպք[54]:

---

[51] Ուղարկվել են հետևյալ կառույցներին՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն», «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն», Հայաստանում կանանց հիմնադրամ, «Կանանց իրավունքների տուն», «Քվիր քուր», «Սպիտակի Հելսինկյան խումբ», «Հանրային քաղաքականության ինստիտուտ», Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Փինք», «Կանանց աջակցման կենտրոն», ՕքսԵՁեն հիմնադրամ, Մարդու իրավունքների տուն Երևան, «Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն», «Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն», Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, «Երիտասարդ Տավուշ», «Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն, «Իրական աշխարհ, իրական մարդիկ», «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն», «Սոսե կանանց հիմնահարցեր», «Հասարակություն առանց բռնության», «Թալին-Հույս», «Ընտանիք առանց բռնության», «Մարտունու կանանց համայնք», «Դու մենակ չես», Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիա, «Երիտասարդները հանուն փոփոխության», «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն», «Իրավական նախաձեռնությունների կենտրոն», Հելսինկյան ասոցիացիա, «Ազատ քաղաքացի», «Կանանց ներուժի զարգացման կենտրոն», «Հաշմանդամություն ունեցող անձանց օրակարգ», «Շողեր միություն», «Առաքելություն Հայաստան», «Կանաչ Հայաստան», «Հույսի Մեծամոր», «Բազմազանություն», «Այվան ծաղիկ սոցիալ-կրթական կենտրոն», «Հանուն հավասար իրավունքների կրթական կենտրոն», «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն», «Հանուն հասարակության», Արմավիրի երիտասարդական կենտրոն, Ընտանիք և համայնք:

[52] Մանրամասն տե՛ս https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2022/05/lgbtreport2021_hy.pdf: https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2023/05/lgbtreport2022hy.pdf, էջեր 23-29:

[53] Մանրամասն տե՛ս https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2023/05/lgbtreport2022hy.pdf, էջեր 34-37:

[54] Մանրամասն տե՛ս https://www.pinkarmenia.org/news/sareport2023/:

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ սեռական բռնության մի քանի դեպքերով ԼԳԲՏԻՔ+ անձինք դիմել են աջակցություն ստանալու համար, և նրանցից 6-ը սեռական բռնության են ենթարկվել հիմնականում հենց իրենց սեռական կողմնորոշվածության կամ գենդերային ինքնության հիմքով: Նկարագրված դեպքերից 2-ը եղել են ընտանեկան բռնություններ: Այն է՝

- Ծահառուներից մեկը 17 տարեկան երիտասարդ էր, ում կողմնորոշվածության մասին ենթադրություններ անելով ծնողները վաղ տարիքից նրան տարել էին հոգեբուժական ծառայություն ստանալու և ամեն բան հոգեբույժը հիմնավորել էր նրանով, որ տղան վաղ տարիքում սեռական ոտնձգության է ենթարկվել տղաների կողմից, և իր մոտ «շեղում» է առաջացել: Հոգեբանական խորհրդատվություն է տրամադրվել, ուղղորդվել է Փինք:

- Անձը սեռական բռնության էր ենթարկվել զուգընկերոջ կողմից: Ոստիկանությանը չէր դիմել, ստացել է հոգեբանական աջակցություն:

Կանանց իրավունքների տուն ՀԿ-ի կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2021 թվականի հունվարից մինչև 2023 թվականի օգոստոսի 31-ը Կանանց իրավունքների տանը գրանցվել է ընտանեկան բռնության 421 դեպք: Նույն ժամանակահատվածում ընտանեկան բռնության հարցով Կազմակերպություն է դիմել 6 ԼԲՏԻՔ+ անձ և բոլորը ստացել են անհրաժեշտ իրավաբանական, հոգեբանական և սոցիալական, խորհրդատվություն՝ ընտանեկան բռնության և աշխատանք փնտրելու հարցերով:

6 անձանցից մեկին Կազմակերպության կողմից տրամադրվել է ապաստարանի ծառայություն՝ կացության, սննդի և հիգիենայի պարագաների ձեռքբերման համար, մեկ անձ ուղղորդվել է այլ կազմակերպության ապաստարան, 2-ը մասնակցել են նաև կազմակերպության տնտեսական հզորացման ծրագրերին, ձեռք են բերել նոր մասնագիտություն՝ գրաֆիկ դիզայնի և խոհարարության ոլորտներում, ինչպես նաև ստացել են մասնագիտական գործիքներ: Նշված դեպքերից ոչ մեկով քրեական գործ չի հարուցվել:

Բացի այդ, նշված 6 անձինք հայտնել են իրենց սեռական կողմնորոշվածության և/կամ գենդերային ինքնության մասին, սակայն թիվը հստակ չէ, քանի որ մյուս բռնության դեպքերում անձինք չեն բարձրաձայնել այդ մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏԻՔ+ անձանց հետ խորքային հարցազրույցները, ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ՀՀ-ում գործող իրավապաշտպան կազմակերպությունների և ՀՀ պետական մարմինների տրամադրած տվյալները փաստում են որ հոմոֆոբիան, տրանսֆոբիան, բիֆոբիան համատարած և խորապես արմատավորված են հայ հասարակության մեջ, հաստատում են Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ բացասական տրամադրվածությունն ու վերաբերմունքը:

Նկատելի է, որ վերջին տարիներին հաճախակիացել են ԼԳԲՏԻՔ+ համայնքի նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը, քանի որ ԼԳԲՏԻՔ+ անձինք հիմնականում բավարար աջակցություն և պաշտպանություն չեն ստանում իրավապահ մարմինների կողմից բռնության մասին բարձրաձայնելիս կամ բողոք ներկայացնելիս, ավելին, նման դեպքերը չեն բացահայտվում և չեն հանրայնացվում:

Ընտանեկան բռնության դեպքերի թվի աճի վրա իրենց ազդեցությունն են թողել մի շարք գործոններ. մի կողմից՝ կորոնավիրուսի սոցիալ-հոգեբանական հետևանքները, մյուս կողմից՝ հայ-ադրբեջանական պատերազմական իրավիճակը բացասաբար են անդրադարձել ընտանիքի անդամների միջև հարաբերությունների վրա:

Ինչպես պարզվեց հետազոտության իրականացման ընթացքում, Հայաստանում չկա ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրական համապարփակ և տեսակավորված տվյալների հավաքագրման կենտրոնացված մեխանիզմ, ինչը լուրջ խոչընդոտ է և բարդացնում է իրավասու մարմինների կողմից հստակ տեղեկատվության հավաքագրման գործընթացը: Ավելին, Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրական տվյալներում չկա նշում անձի սեռական կողմնորոշվածության, գենդերային ինքնության և ինքնարտահայտման վերաբերյալ, ինչը, մեր ընկալմամբ, կապված է քաղաքական կամքի, ռեսուրսների, համապատասխան գիտելիքների բացակայության հետ: Վիճակագրության իսպառ բացակայությունն այն ցուցիչներից է, ըստ որի՝ պետք է արձանագրել, որ պետությունը հետաքրքրված չէ ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելմամբ և հետևանքների հաղթահարմամբ: Մյուս կողմից, չնայած գործող օրենսդրական կարգավորումների համաձայն լիազոր մարմինները պարտավոր են վարել ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրություն, ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում կատարված բռնության դեպքերը չեն արձանագրվում և չեն փաստագրվում:

Ընտանեկան բռնության ամենախոցելի խմբերը կանայք և երեխաներն են, իսկ ամենահաճախ հանդիպող բռնության դեպքերը պայմանավորված են անձի սեռով և գենդերով: Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏԻՔ+ անձինք, ըստ տարիքային սահմանափակման, հիմնականում մինչև 25 տարեկան երիտասարդներ են, զոհերի մեծամասնությունը գեյ տղամարդիկ և տրանսգենդեր կանայք են, որոնք բռնության են ենթարկվում հիմնականում ծնողների կողմից: Ավելորդ չէ նշել, որ առավել դաժան բռնության ԼԳԲՏԻՔ+ անձինք ենթարկվում են ընտանիքի հոր կողմից, որը կապված է Հայաստանի հայրիշխանական հասարակության և ավանդական մշակութային պատկերացումների հետ:

Որպես ընտանեկան բռնության դրդապատճառ՝ առաջին տեղում անձի սեռական կողմնորոշվածությունն է, գենդերային ինքնությունն ու ինքնարտահայտումը: Ամենից հաճախ հանդիպող բռնության ձևը հոգեբանականն է, քանի որ բռնության մյուս ձևերը գրեթե բոլոր դեպքերում զուգորդվում են հոգեբանական բռնությամբ:

Ցավոք, արձանագրվեց նաև, որ բռնության ենթարկված ԼԳԲՏԻՔ+ անձինք ոչ միշտ են դիմում ոստիկանություն, ինչը կապված է ոստիկանության կողմից ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի, նախկինում բռնության դեպքերին չարձագանքելու, կրթության մակարդակի պակասի և այլ գործոնների հետ:

Արձանագրենք, որ օրենսդրական մակարդակում առկա բացերը նույնպես նպաստում են ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում ընտանեկան բռնության դեպքերի տարածվածությանը, այն է՝ զուգընկերոջ կողմից բռնությունը ընտանեկան բռնություն չդիտարկելը, տնտեսական, հոգեբանական բռնությունը և անտեսումը որպես հանցագործություն չդիտարկելը, ատելության խոսքի դեմ պայքարի արդյունավետ օրենսդրական կառուցակարգ չունենալը, ինչպես նաև Ստամբուլյան կոնվենցիայի վավերացված չլինելը:

Նշված գործոնների համապարփակ կարգավորումը թույլ կտա նվազեցնել ընտանեկան բռնության դեպքերը ու կանխարգելել դրանք: Խիստ անհրաժեշտ է նաև ոստիկանության և քննչական մարմինների ծառայողների վերապատրաստումը և ուսուցանումը, որը կօգնի առավել զգայուն մոտեցում ցուցաբերել ընտանեկան բռնության ԼԳԲՏԻՔ+ զոհերի նկատմամբ և համապատասխանաբար գնահատել նրանց կարիքները:

Մտահոգիչ է նաև, որ Հայաստանում գործող ապաստարաններից ոչ մեկը չի ապաստանել բռնության ենթարկված որևէ ԼԳԲՏԻՔ+ անձի, հետևաբար, չենք կարող ասել, որ դրանք ներառական են և հաշվի են առնում համայնքի կարիքները:

Հույս ունենք, որ սույն հետազոտության հրապարակայնացումը և լուսաբանումը կնպաստի հասարակության շրջանում ԼԳԲՏԻՔ+ անձանց խնդիրների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, համայնքի նկատմամբ բռնության և ատելության նվազմանը:

Միևնույն ժամանակ, այս հիմնախնդիրներին դիմակայելու համար պակաս կարևոր չէ իրավապաշտպան կազմակերպությունների ներգրավվածությունը և աջակցությունը: Որպես քաղաքացիական հասարակության կարևոր անդամներ՝ իրավապաշտպան կազմակերպությունների ջանքերը պետք է ուղղված լինեն ԼԳԲՏԻՔ+ անձանց իրավունքների պաշտպանությանը:

Ավելին, ԼԳԲՏԻՔ+ անձինք, որպես հասարակության լիիրավ անդամներ, լեգիտիմ ակնկալիք ունեն՝ զգալու պետության ամբողջական աջակցությունը և պաշտպանությունը բռնության բոլոր դեպքերից: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է բարեփոխել գործող օրենսդրական մեխանիզմները, որոնք առաջին քայլն են ներդաշնակ հասարակություն ստեղծելու ճանապարհին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով իրականացված հետազոտությունը՝ գտնում ենք, որ առկա է անհրաժեշտություն կատարելագործելու առկա որոշ իրավական կարգավորումները ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏԻՔ+ անձանց իրավունքները պաշտպանելու համար:

ՀՀ Կառավարությանը

1. Ինչպես պարզ դարձավ հետազոտության ընթացքում, ընտանեկան բռնության վերաբերյալ փաստա-վիճակագրական ընդհանուր տվյալների բազա, որի վրա կարելի է հիմնվել համապատասխան քաղաքականություն մշակելիս, գոյություն չունի: Կան ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին հետազոտություններ, հատվածական, ոլորտային վիճակագրական տվյալներ, սակայն միասնական, համապարփակ համակարգ, որտեղ կհամակարգվեն այս տվյալները, առկա չէ, իսկ առկա և հասանելի տվյալները ոչ միշտ է, որ դառնում են քաղաքականության մշակման հիմք: Անգամ իրավասու մարմիններից ստացված վիճակագրության հավաքագրումից հետո մեզ համար հասկանալի էր, որ դրանց համադրում հնարավոր չէ կատարել և իրական պատկեր ստանալ, քանի դեռ ՀՀ ոստիկանության, դատախազության, քննչական կոմիտեի, ՀՀ դատական դեպարտամենտի և այլ մարմինների կողմից մեզ տրամադրված քանակական տվյալները իրարից խիստ տարբերվում են:

Ուստի տվյալների վստահելիության, ընդհանրապես փաստա-վիճակագրական տվյալների ձևավորման մեթոդաբանության, ինչպես նաև այս հենքի կիրառման առումով կարևորվում է տարբեր կառույցների միջև համագործակցության խնդիրը, մասնավորապես հետազոտողների, ծառայություններ մատուցողների, քաղաքականություն մշակողների միջև, գործընթացի բոլոր փուլերում՝ հետազոտության/հարցման խնդիրների մշակման, տվյալների հավաքագրման, վերլուծության և ամփոփման, ինչպես նաև դրանց կիրառման փուլերում:

Անհրաժեշտ է ստեղծել համապարփակ և տեսակավորված տվյալների հավաքագրման կենտրոնացված մեխանիզմ, ընդհանուր վիճակագրական համակարգ, որտեղ կամփոփվեն քանակական և սոցիալական տվյալները, կհստակեցվի հարուցված գործի հետագա ընթացքը, արդյունքները:

2. Իրավասու պետական մարմիններից հետազոտական տվյալների հավաքագրման ընթացքում պարզ դարձավ, որ ՀՀ իրավապահ մարմինները ընտանեկան բռնության դեպքերի առնչությամբ չեն վարում առանձին վիճակագրություն ԼԳԲՏԻՔ+ անձանց վերաբերյալ: Նման վիճակագրության բացակայությունը խոչընդոտում է իրական տվյալների հավաքագրմանը և ԼԳԲՏԻՔ+ անձանց կարիքների գնահատմանը, որոնք դարձել են ընտանեկան բռնության զոհ: Ուստի, կարծում ենք, որ անհրաժեշտ է ընտանեկան բռնության վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելիս վիճակագրության մեջ ներառել ընտանեկան բռնության զոհ դարձած անձի սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության, ինքնարտահայտման վերաբերյալ՝ հետագայում նրանց անհրաժեշտ իրավական, սոցիալական, հոգեբանական աջակցությունը հասցեական, թիրախային դարձնելու նպատակով: Նմանապես, սույն առաջարկությունը վերաբերում է նաև տարբեր սոցիալական աջակցության կենտրոններին, ապաստարաններին, հասարակական կազմակերպություններին:

ՀՀ ազգային ժողովին

1. Անհրաժեշտ է վավերացնել Ստամբուլյան կոնվենցիան, ինչը գենդերային հիմքով բռնությանը վերջ դնելու համապարփակ իրավական, նորմատիվ հիմք է: Վենետիկի հանձնաժողովն այն կարծիքին է, որ այդ Կոնվենցիայում չկան այնպիսի դրույթներ, որոնց վերաբերյալ կարելի է ասել, թե դրանք «հակասում են» ՀՀ սահմանադրությանը: Ընդհակառակը, Ստամբուլյան կոնվենցիայի հիմնական պարտավորությունը, այսինքն՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի և ընտանեկան բռնության կանխարգելումը և դրա դեմ պայքարը, արդեն իսկ բխում է Սահմանադրությունից և մարդու իրավունքների մասին այլ պայմանագրերից, որոնց մասնակից կողմ է Հայաստանը: Ուստի պետք է ավարտին հասցնել այն վավերացնելու գործընթացը:

ՀՀ ազգային ժողովի պատգամավորներին, խմբակցություններին և ՀՀ Կառավարությունը

1. Անհրաժեշտ է քրեականացնել Օրենքով նախատեսված տնտեսական, հոգեբանական բռնությունը և անտեսումը: Այժմ, ինչպես նշվեց նաև Զեկույցում, քրեական հետապնդում է նախատեսված ընտանեկան բռնության տեսակներից միայն ֆիզիկական և սեռական բռնության համար, որոնք ինքնուրույն հանցակազմեր են: Քրեական ներգործությունից և պատժից դուրս են մնում տնտեսական, հոգեբանական բռնությունը և անտեսումը՝ որպես ինքնուրույն հանցակազմեր: Հաշվի առնելով ընտանեկան բռնության նշված տեսակների տարածվածությունը, ինչը ցույց է տվել հետազոտությունը, անհրաժեշտ է քրեորեն պատժելի դարձնել ընտանեկան բռնության նշված տեսակները: Այն հնարավորություն կտա արդյունավետ պայքարել ընտանեկան բռնության բոլոր դրսևորումների դեմ և քրեաիրավական գործիքակազմի միջոցով կանխել նման հանցագործությունները:

2. Հաշվի առնելով հասարակության մեջ ծայրահեղական ատելության խոսքի դրսևորումները ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ, բռնությունն արդարացնող և ատելություն սերմանող կոչերը՝ գտնում ենք, որ խիստ անհրաժեշտ է նաև քրեականացնել ատելության խոսքը, որը դրսևորվում է մասնավորապես անձանց գենդերային ինքնության և սեռական կողմնորոշվածության հիմքով: Ատելության խոսքը հասնում է ահռելի չափերի և էական վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար: ԼԳԲՏԻՔ+ անձինք առավելապես բախվում են ատելության խոսքի մարտահրավերներին, ինչը կանխելը պետության պարտականությունն է: Ատելության խոսքը գեներացնում է նաև բռնություն, ուստի, պետությունը պարտավոր է համապատասխան մեխանիզմների օգնությամբ կանխել և պատժել բռնությունը, որը հիմնված է ատելության խոսքի վրա:

3. ՀՀ քրեական օրենսգիրքը պետք է լրացնել նոր հոդվածով, որը պատիժ է սահմանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման համար:

Ինչպես նշվել է Զեկույցում, հարուցված քրեական վարույթի դեպքում, քննիչն իրավասու է հատուկ պաշտպանության միջոցներ կիրառել՝ պաշտպանելու բռնության ենթարկված զոհին բռնարարից: Ի թիվս այլոց, այդպիսի միջոցներից է «պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը» (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդված), որի կայացման դեպքում, պաշտպանվող անձի կյանքին կամ առողջությանն սպառնացող վտանգի մասին վկայող փաստերի առկայության դեպքում, երբ դրանք բավարար չեն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար, վարույթն իրականացնող մարմինը նրան պաշտոնապես նախազգուշացնում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդված) պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու անթույլատրելիության, ինչպես նաև այդ պահանջը խախտելու համար օրենքով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին: Այնինչ, չնայած ՀՀ քրեական դատավարության 75-րդ հոդվածով նախատեսված է պատասխանատվության միջոցի կիրառում, առկա է օրենքի բաց և որևէ այլ օրենք չի սահմանում նման պատասխանատվության միջոց:

Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է քրեականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պաշտպանության միջոցը խախտելու դեպքերը՝ ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնելով նոր հոդվածով:

ՀՀ ոստիկանությանը

1. Հաշվի առնելով ԼԳԲՏԻՔ+ անձանց վստահության ցածր մակարդակը ոստիկանության նկատմամբ՝ անհրաժեշտ է մշակել և իրականացնել ոստիկանության ծառայողների շրջանում կրթական ծրագրեր, որոնք կբարձրացնեն ոստիկանության ծառայողների իրավական պատրաստվածությունը: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ ԼԳԲՏԻՔ+ անձինք հաճախ նաև վատ վերաբերմունքի են արժանանում հենց ոստիկանության բաժիններում, անհրաժեշտ է համապատասխան դասընթացների միջոցով ոստիկանության աշխատողների մոտ ձևավորել զգայուն վերաբերմունք ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ:

Միևնույն ժամանակ, ընտանեկան բռնության դեպքում ոստիկանները պետք է գործեն արագ և որոշումները կայացվեն ամենասեղմ ժամկետներում՝ բացառելով բռնարարի և զոհի շփումը ոստիկանության բաժիններում:

2. Առաջարկում ենք որպեսզի ոստիկանությունն առանձին փաստագրի ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ բռնությունները՝ որպես սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով բռնություն և խտրականություն:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին (ՄԻՊ)

1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես անկախ գործող սահմանադրական մարմին, պետք է հետևողականորեն քայլեր ձեռնարկի՝ ապահովելու ԼԳԲՏԻՔ+ անձանց շահերի պաշտպանությունը: Անհրաժեշտ է, որպեսզի տարեկան կամ արտահերթ զեկույցների միջոցով ՀՀ ՄԻՊ-ը վերհանի գործող օրենսդրական բացերը, ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը դառնան քննության առարկա:

ՀՀ ՄԻՊ-ը հանդես է գալիս մարդու իրավունքների պաշտպանության դիրքերից և վերջինիս կողմից ընտանեկան բռնության վերաբերյալ մշտադիտարկումը, խնդիրների վերհանումը, այդ թվում՝ պետական մարմիններում, կարող է նպաստել այդպիսի դեպքերի նվազմանը կամ կանխմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Զեկույցներ, հոդվածներ

- «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց օգնող մասնագետների համար», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2021 թ.:

- «Խտրականությունը, ատելության հանցագործությունները և ատելության խոսքը Հայաստանում. տվյալների հավաքագրում», Իրավիճակի վերլուծության զեկույց, Արա Ղազարյան, 2019թ.:

- «Կնասպանությունը Հայաստանում: Լուռ համաճարակ», Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, Զեկույց, 2016թ.:

- «Հայաստանի Հանրապետության կարծիքը՝ Եվրոպայի Խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» (Ստամբուլյան կոնվենցիա) վավերացման սահմանադրական վավերացման հետևանքների մասին», Վենետիկի հանձնաժողով, Ստրասբուրգ, 2019թ. հոկտեմբերի 14, Կարծիք թիվ 961/ 019, CDL-AD(2019)018:

- «Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում» հետազոտություն 2021-2022թթ. իրավական զեկույց, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ:

- “Hate crimes today: An age-old foe in modern dress”, American Psychological Association position paper released in 1998

Իրավական ակտեր և միջազգային փաստաթղթեր

- ՀՀ սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1999թ.:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 2022թ.:

- ՀՀ քրեական օրենսգիրք, 2003թ.:

- ՀՀ քրեական օրենսգիրք, 2022թ.:

- ՀՀ օրենքը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին», 2017թ.:

- ՀՀ օրենքը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին», 2013թ.:

- ՀՀ օրենքը «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», 2005թ.:

- ՀՀ օրենքը «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», 2021թ.:

- ՀՀ կառավարության 10.10.2019 թվականի N 1381-Ն «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» որոշում:

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, 1950թ.:

- Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ., ուժի մեջ է մտել 1976թ.:

- Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, 1966թ., ուժի մեջ է մտել 1976թ.:

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա, 1953թ.:

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 1981թ.:

- «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (CEDAW Optional Protocol), 2006թ.:

- Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, 1987թ.:

- «Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի 2011թ-ին Ստամբուլում ստորագրված կոնվենցիա, (Ստամբուլյան կոնվենցիան):

- «Կանանց քաղաքական իրավունքների մասին» կոնվենցիա, 2007թ.:

- Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա»-ն լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրություն, 2002թ.:

Կայքեր և հղումներ

- https://armstat.am/file/article/dv_executive_summary_arm.pdf
- ARM(2021)IC_Handbook_ARM_08112021 2754-9080-4997 v.1.pdf
- Femicide_Report_ARM.pdf (coalitionagainstviolence.org)
- https://hcav.am/hrw-2016/
- https://hy.warbletoncouncil.org/feminicidio-6089
- https://mlsa.am/wp-content/uploads/2017/04/177-A-1.pdf
- http://rightsidengo.com/
- https://rm.coe.int/art-16-armenian-2-/16808f0fc9
- https://www.coe.int
- https://www.echr.am/home.html
- https://www.pinkarmenia.org/news/dvcase-yerevan/
- https://www.investigative.am/news/view/yntanekan-brnutyunner-vichakagrutyun_2021.html
- https://www.investigative.am/news/view/20222-yntanekan-brnutyan-veraberyal-ampopum.html
- https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2022/05/lgbtreport2021_hy.pdf
- https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2023/05/lgbtreport2022hy.pdf
- https://www.pinkarmenia.org/news/sareport2023/
- https://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women
- https://www.ombuds.am/am/site/WomenLegalDocuments
- https://www.womensupportcenter.org/DV&Children_spreads_ARM_new.pdf

+374 11 880 770
rightsidengo@gmail.com
www.rightsidengo.com

Սոցիալական ցանցեր

RightSide/NGO

RightSide/NGO

RightSide/NGO

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հայաստան, Երևան

ILGA EUROPE

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ